ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՌՑԱՆՑ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

ԿՐԹԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ
ՈՒՍՈՒՑԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Ֆինանսավորվում
է Եվրոպական միության
և Եվրոպայի խորհրդի կողմից

Եվրոպական միություն

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Իրականացվում
է Եվրոպայի խորհրդի կողմից

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՌՑԱՆՑ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

ԿՐԹԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ՈՒՍՈՒՑԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եվրոպայի խորհուրդ

Սույն ձեռնարկը մշակվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ համագործակցությամբ՝ «Արդարադատության մատչելիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի զոհերի համար՝ արտադատական կարգով փոխհատուցման մեխանիզմների միջոցով» տարածաշրջանային ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ «Գործընկերություն հանուն լավ կառավարման-II» (2019-2022) ծրագրային ձևաչափի շրջանակներում և իրականացվում Եվրոպայի խորհրդի կողմից:
Սույն ձեռնարկում արտահայտված տեսակետները որևէ կերպ չեն արտացոլում կողմերից որևէ մեկի պաշտոնական դիրքորոշումը:

Ծրագրային թիմը շնորհակալություն է հայտնում ձեռնարկի հեղինակներ Անահիտ Չիլինգարյանին և Նելլի Գիշյանին իրենց կատարած աշխատանքի համար:

Սույն ձեռնարկի հատվածների վերարտադրումը (մինչև 500 բառ) թույլատրվում է՝ բացառությամբ առևտրային նպատակների՝ քանի դեռ պահպանվում է տեքստի ամբողջականությունը, հատվածը չի օգտագործվում համատեքստից դուրս, չի տրամադրում թերի տեղեկատվություն կամ այլ կերպ չի մոլորեցնում ընթերցողին տեքստի բնույթի, շրջանակի կամ բովանդակության վերաբերյալ: Տեքստի աղբյուրը միշտ պետք է ճանաչվի հետևյալ կերպ՝ «©Եվրոպայի խորհուրդ, հրատարակության տարեթիվը»:

Սույն փաստաթղթի ամբողջական կամ մասնակի վերարտադրմանը կամ թարգմանությանը վերաբերող բոլոր հարցերը պետք է հասցեագրվեն Հաղորդակցության և կապի հարցերով տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Սույն ձեռնարկը պատրաստվել է 2021 թ.-ի օգոստոսին, վերանայվել 2022 թ.-ին:

Լուսանկարներ՝ www.pixabay.com

Եվրոպայի խորհրդի հրատարակություն F-67075 Strasbourg Cedex http://book.coe.int

© Եվրոպայի խորհուրդ, փետրվար 2023
Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Եվրոպական միությունն արտոնագրված է որոշակի պայմաններով:

Բովանդակություն

Ինչ նպատակ ունի այս ձեռնարկը
և ում համար է այն նախատեսված 4

Ինչպես կիրառել ձեռնարկը 5

ԹԵՄԱ 1 ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 8

ԹԵՄԱ 2 ԻՆՉ Է ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ
ԻՆՉՊԵՍ Է ԱՅՆ ԴՐՍԵՎՈՐՎՈՒՄ ԱՌՑԱՆՑ 15

ԹԵՄԱ 3 ԲՈՒԼԻՆԳ (ՍՏՈՐԱՑՈՒՑԻՉ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒՄ, ԾԱՂՐ) 22

ԹԵՄԱ 4 ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 26

ԹԵՄԱ 5 ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ՝
ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ 29

ԹԵՄԱ 6 ԻՆՉ ԱՆԵԼ 33

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 36

Շնորհակալական խոսք 38

Դասընթացի օրակարգի նմուշ 39

Ի՞նչ նպատակ ունի այս ձեռնարկը և ո՞ւմ համար է այն նախատեսված

Ձեռնարկը նախատեսված է ուսուցանողների, ուսուցիչների, ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական համակարգում աշխատողների, խնամակալների, ծնողների, 13 տարեկանից բարձր երեխաների հետ աշխատող անձանց համար:

Ձեռնարկը նպատակ ունի՝

- զարգացնել ուսուցանողների և երեխաների գիտելիքներն ատելության խոսքի և բուլինգի, այդ համատեքստում՝ երեխայի իրավունքների վերաբերյալ,
- ուսուցանողների և երեխաների մոտ ձևավորել հակադրվող վերաբերմունք ատելության խոսքի և բուլինգի նկատմամբ,
- զարգացնել ուսուցանողների և երեխաների կարողությունները՝ բացահայտելու երեխայի իրավունքների խախտումները, մասնավորապես, բուլինգի, ատելության խոսքի առցանց դրսևորումների համատեքստում ու քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ,
- ուսուցանողներին տրամադրել գործիքակազմ՝ ատելության խոսքի և բուլինգի վտանգների մասին երեխաներին իրազեկելու նպատակով:

Ձեռնարկի կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ատելության խոսքը տարածում է ստանում նաև հայաստանյան իրականության մեջ, իսկ առցանց տիրույթն առավել լայն հնարավորություն է ընձեռում դրա գործածության և ազդեցության բազմապատկման համար:

Թեև ատելության խոսքը մեծ տարածում է ստացել մեծահասակների շրջանում, այնուամենայնիվ դեռահասներն առավել խոցելի և զգայուն են առցանց տիրույթում ատելության խոսքի ու ծաղրի նկատմամբ՝ պայմանավորված իրենց տարիքային և հասունության առանձնահատկություններով:

Հեղինակներն այս ձեռնարկը կազմել են նախ և առաջ մեծահասակների համար՝ նպաստելու հնարավոր վտանգների և արատավոր երևույթների մասին նրանց իրազեկմանը, անձամբ զգուշավորություն ցուցաբերելու և դեռահասներին օգնելու զերծ մնալ այդ վտանգներից, ինչպես նաև սովորեցնելու պատասխանատվությամբ օգտվել համացանցից՝ հարգելով մյուսների իրավունքները:

Ձեռնարկում ներկայացված թեմաների շուրջ քննարկումը կարող է հաճախ ցավոտ, անընդունելի լինել և արժանանալ նաև դասընթացավարի, ուսուցանողի դիմադրությանը: Սակայն կարևոր է հիշել, որ աշխատանքը հետապնդում է մեկ ընդհանուր նպատակ՝ յուրաքանչյուրի նկատմամբ դրսևորել հարգանք և երեխաների զարգացման համար ապահովել նպաստավոր պայմաններ՝ ձևավորելով առողջ և անվտանգ միջավայր:

Ատելության խոսքի, բռնության տարբեր դրսևորումների վտանգի վերաբերյալ բազմաթիվ հետազոտություններ են իրականացվել: Հետազոտությունները փաստում են, որ դրանք հանգեցնում են երկարաժամկետ բացասական հետևանքների անձի զարգացման և ձևավորման համար: Ատելության հիմքով հանցագործությունները, ատելության խոսքը, բուլինգը, խտրականությունը, բռնությունը կարող են ծանր հետևանքներ ունենալ տուժողի կարգավիճակում հայտնված անձանց համար: Ատելության խոսքը դիտարկվում է որպես անձի արժանապատվության նկատմամբ ոտնձգություն, որը կարող է երկարատև հոգեբանական ազդեցություն

ունենալ նրա վրա: Պարբերաբար կրկնվող նվաստացնող և վիրավորական մեկնաբանությունները կամ ատելության խոսքը կարող են հանգեցնել տուժողի կողմից սեփական անձի նկատմամբ հարգանքի կորստի:

Երկարաժամկետ հոգեբանական հետևանքներն են դեպրեսիան, անհանգստության զգացողությունը, ինքնավստահության նվազումը, ցածր ինքնագնահատականը, զայրույթը, քնելու հետ կապված խնդիրները, թույլ կենտրոնացումը և ընդհանուր անապահովության զգացումը: Հետազոտությունները ցույց են տվել, որ բուլինգի և բռնության հետևանքով զոհերը կարող են ձեռք բերել ֆիզիկական և հոգեկան առողջության խնդիրներ:

Ինչպե՞ս կիրառել ձեռնարկը

Ձեռնարկն առաջարկում է ատելության խոսքի և դրա հետ համակցված՝ երեխայի իրավունքների մասին դասավանդման, տեղեկությունների փոխանակման պարզ, մատչելի և ինտերակտիվ մեթոդաբանություն:

Ձեռնարկում կարող եք գտնել թեմաների վերաբերյալ համառոտ ներածական տեղեկություններ, որոնք անհրաժեշտ է հաղորդել սովորողներին: Ձեռնարկն ապահովում է ներածական, այլ ոչ ամբողջական և լիարժեք գիտելիքներ երեխաների իրավունքների, ատելության խոսքի և ներառված այլ թեմաների վերաբերյալ: Թեմատիկ քննարկումներ ծավալելու և երեխաների հարցերին պատշաճ կերպով արձագանքելու համար ուսուցանողը կունենա լրացուցիչ գրականություն ուսումնասիրելու կարիք: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ուսուցանողը միշտ չէ, որ կունենա երեխաների բոլոր հարցերին պատասխանելու հնարավորություն, դրանք կարող են լինել բազմազան և բարդ: Միշտ հիշե՛ք, երեխաների հարցին կարող եք արձագանքել ասելով նրանց, որ տվյալ հարցին պատասխանելու համար դուք ունեք լրացուցիչ ուսումնասիրության կարիք և հարցին կպատասխանեք ավելի ուշ: Ձեռնարկի վերջում ներկայացնում ենք լրացուցիչ ուսումնասիրության համար անհրաժեշտ որոշ նյութեր, որոնք կօգնեն խորացնել գիտելիքները և կատարելագործել դասավանդումն առանձին թեմաների շուրջ:

Գիտելիքներն ամրապնդելու, հղկելու, քննարկումներ ծավալելու համար ձեռնարկում զետեղված են վարժությունների օրինակներ: Հիշե՛ք, որ վարժություններն անհրաժեշտ է կատարել խաղային, ինտերակտիվ ձևաչափով՝ հաշվի առնելով երեխայի տարիքը, հաշմանդամությունը, անձնական և սոցիալական այլ հանգամանքները: Կարևոր է ապահովել բաց ու հարգալից մթնոլորտ: Դասավանդման ընթացքը կառուցեք զրույցի ձևաչափով, մասնակիցներին բավարար ժամանակ տրամադրելով արտահայտվելու համար և ստեղծելով անհրաժեշտ հավասար միջավայր՝ անշուշտ հարգելով մյուսների արժանապատվությունը:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Մասնակցայնություն և ներառականություն

Մասնակցությունը և ներառականությունը կարևոր են դասընթացը հաջողությամբ անցկացնելու համար: Բոլոր մասնակիցներին պետք է դիտարկել որպես անհատներ, ովքեր կարող են ներդնել արժեքավոր տեղեկություններ և գիտելիքներ: Անհրաժեշտ է ստեղծել բարյացակամ հուզական միջավայր և ժամանակ տրամադրել մասնակիցներին: Կարևոր է, վարողները համոզվեն, որ դասընթացի և քննարկումների ընթացքում չեն անտեսվում որևէ տեսակի հաշմանդամություն ունեցող, հոգեկան, մտավոր հաշմանադամություն, հուզական տարբեր վիճակներում գտնվող երեխաները, յուրաքանչյուր երեխա ընդգրկված է և հավասարաչափ խրախուսված է բոլորի մասնակցությունը:

Օրինակ, որոշ մասնակիցներ կարող են ամոթխածություն, անհարմարություն զգալ և չարտահայտվել, ոմանք պարզապես չունենան արտահայտվելու ցանկություն, ինչի հիմքում, ոչ միշտ, սակայն կարող է ընկած լինել նաև խմբի մեջ ներառված չլինելու կամ անապահովության զգացումը: Դասընթացավարը պետք է գործադրի բոլոր ջանքերն ապահով միջավայր ձևավորելու, խրախուսելու և բոլորին ներգրավելու համար: Հաճախ, մեկ անգամ արտահայտվելով և զգալով, որ իրենց լսում են, երեխաներն իրենց կարծիքներն արտահայտելու և քննարկումներին մասնակցելու առավել մեծ պատրաստակամություն են հայտնում: Այդուհանդերձ, խուսափեք գերճնշում գործադրելուց, քանի որ կլինեն մասնակիցներ, ովքեր պարզապես չեն ցանկանա բարձրաձայն արտահայտվել: Կարևոր է, որ դասընթացավարը մասնակիցներին անհարմար դրության մեջ չդնի և արտահայտվելու իր խրախուսանքները չվերածվեն ճնշումների: Հիշե՛ք, որ դասընթացն ընդհանուր ուսուցման փորձ է:

Զգայունություն

Դասընթացավարը պետք է հիշի մասնակիցների բազմազանության մասին՝ գիտակցելով, որ բազմաթիվ գործոններ, ինչպիսիք են՝ մշակույթը, սեռը, սոցիալական կարգավիճակը, ընտանիքում հարաբերությունները տարբեր կերպ են ձևավորել նրանց կենսափորձը և գիտելիքները:

Կարևոր է խոսել այնպիսի լեզվով և օգտագործել այնպիսի օրինակներ, որոնք բացասական կերպով չեն թիրախավորի որևէ հատկանիշ[1], իսկ երեխաների կողմից նման օրինակներ բերելու դեպքում քննարկումն անհրաժեշտ է ուղղորդել դեպի կառուցողական հուն՝ ընդգծելով անձի արժանապատվության, բազմազանության ու տարբերությունների հանդեպ հարգանքը:

Ոչ քննադատական միջավայր

Բաց քննարկումները կարևոր են, քանզի անհրաժեշտ է լսել յուրաքանչյուրի կարծիքը: Դասընթացի նպատակն է համատեղ աշխատել ու գտնել տարբեր անձանց իրավունքների նկատմամբ հարգանքի ձևավորման ուղիներ: Դասընթացի ընթացքում տարբեր մարդիկ տարբեր կերպ են արձագանքում և արտահայտում իրենց զգացմունքները, որոշ դրույթներ կարող են բացարձակապես անընդունելի լինել մասնակիցների համար: Կարևոր է, որ մասնակիցներն ունենան իրենց կարծիքներն ու զգացմունքներն արտահայտելու հավասար հնարավորություն: Երեխաներին պետք է տրամադրել ժամանակ, չընդհատել նրանց իրենց փորձի մասին խոսելիս և ապահովել, որ մյուսներն առավել զգայուն և հարգալից վերաբերմունք ցուցաբերեն նրանց հանդեպ:

1 Հաշմանդամություն ունեցող երեխաների հետ հաղորդակցման համար ընթերցեք՝ https://www.civilnet.am/news/183483/ներառական-բառարան-կամ-ինչպես-խոսել-հաշմանդամություն-ունեցող-անձանց-մասին/ https://www.facebook.com/KristinneGrigoryan/posts/1235088013345327

ՀՈՒՇԱԹԵՐԹ
ԻՆՉ ԱՆԵԼ ԵՎ ԻՆՉ ՉԱՆԵԼ[2]

1

Խրախուսեք մասնակիցներին արտահայտել իրենց սեփական կարծիքը և կիսվել գաղափարներով, ինչպես նաև խոսել իրենց սեփական փորձառության մասին:
Մի՛ քննադատեք որևէ առաջարկություն՝ անվանելով այն «անօգուտ», «առնչություն չունեցող» կամ «հիմար»:

2

Աշխատեք ձևավորել **փոխադարձ հարգանքի վրա հիմնված**, **անվտանգ**, **ապահով միջավայր**, որտեղ ոչ ոք չի ունենա սեփական կարծիքն արտահայտելու խնդիր:
Թույլ մի՛ տվեք, որպեսզի խումբը մերժի, անտեսի, կանխակալ վերաբերմունք ցուցաբերի կամ հարգանքով չվերաբերվի որևէ մեկին: Աշխատեք հենց սկզբից սահմանել որոշ ելակետային սկզբունքներ:

3

Խրախուսեք քննարկումներն ու հարցադրումները. կասկածներ ու անվստահությունն արտահայտելով մարդիկ նույնպես սովորում են:
Մի՛ ներկայացրեք երկարատև շնորհանդեսներ, այդպիսով մասնակիցները կկորցնեն իրենց հետաքրքրությունը:

4

Աշխատեք **կապել նյութը** մասնակիցներին շրջապատող իրականության և իրենց կյանքում հանդիպող իրական խնդիրների հետ:
Մի՛ ծանրաբեռնեք նրանց ընդհանրացումներով, որոնց կապը իրենց իրական կյանքի հետ նրանք չեն տեսնի:

5

Հրաժարվեք դոգմատիկ արտահայտություններից: Հնարավորություն տվեք նրանց կասկածի տակ առնել «անքննելի ճշմարտությունները» և դուք էլ հետևեք նրանց օրինակին:
Մի՛ «քարոզեք» և **մի՛ օգտագործեք ձեր դիրքորոշումը** վեճը փակելու համար:

6

Անկեղծ եղեք մասնակիցների հետ: Նրանք ձեզ ավելի շատ կհարգեն և ավելի հեշտությամբ կարտահայտվեն: Մի՛ փորձեք ցույց տալ, որ դուք գիտեք պատասխանը, եթե դա այդպես չէ:
Ասեք նրանց, որ կփորձեք պարզել կամ հորդորեք ինքնուրույն գտնել պատասխանները:

7

Վստահեք մասնակիցներին: Նրանք պետք է կարողանան ինքնուրույն գտնել պատասխանները:
Մի՛ վերաբերվեք նրանց բարձրից և մի՛ փորձեք առաջնորդել, եթե նրանք դա չեն ուզում:

8

Լուրջ վերաբերվեք նրանց առաջարկներին: Հավանականությունը, որ նրանք կներգրավվեն շատ ավելի մեծ կլինի, եթե նրանք զգան, որ իրենց լուման են ներդնում քննարկմանը:
Մի՛ փորձեք անպայման հետևել նախնական ծրագրին: **Հարմարվեք** նրանց **հետաքրքրություններին**, եթե զգում եք, որ նրանք ցանկանում են այլ ուղղությամբ շարժվել:

9

Փորձեք ազդել նրանց մարդկային բնական զգացմունքների վրա: **Հարցրեք նրանց՝** ինչ են նրանք զգում, կամ ինչ կզգային եթե...
Մի՛ հանձնվեք, եթե նրանց կարծիքները սխալ են կամ անմիտ: Ցու՛յց տվեք նրանց այլ տեսանկյուն:

10

Վարվեք մասնակիցների հետ ինչպես հավասարը հավասարին: Բոլորը հավասար են, մենք բոլորս ընդամենը սովորական մահկանացուներ ենք:

ԵՎ ՎԵՐՋԱՊԵՍ

Մի՛ անտեսեք որևէ մասնակցի և նախապես կարծիք մի՛ կազմեք նրանց կարողությունների մասին: Մարդիկ անկանխատեսելի են:

2 «Էջանիշեր. Մարդու իրավունքների կրթության միջոցով ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարի ձեռնարկ», Է. Քին, Մ. Ջորջեսկու, Ռ. Գոմես, Եվրոպայի խորհուրդ, վերանայված հրատարակություն (2020), էջ 26 https://rm.coe.int/book-marks-ar-9-web/1680a52786

ԹԵՄԱ 1
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում երեխաները պետք է իմանան, որ նրանք օգտվում են մարդու իրավունքների ընդհանուր փաթեթից, տեղեկանան երեխայի իրավունքների հիմունքներին, կարողանան մեկնաբանել ու ճանաչել երեխայի իրավունքների սկզբունքները:

Թեմայի նպատակն է, որպեսզի սովորողները՝
- ձեռք բերեն գիտելիքներ երեխաների իրավունքների էության վերաբերյալ,
- ձևավորեն հմտություններ՝ երեխաների իրավունքները գիտակցելու, մեկնաբանելու, կիրառելու ուղղությամբ,
- ընկալեն, որ իրավունքների հետ մեկտեղ առկա է նաև դիմացինի իրավունքները հարգելու պարտականությունը:

ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք համարվում է երեխա[3]: Յուրաքանչյուր երեխա անհատ է և օժտված է հիմնարար մարդկային արժանապատվությամբ: Չնայած այն հանգամանքին, որ երեխաները կյանքը սկսում են որպես միանգամայն կախյալ էակներ, նրանք չեն համարվում իրենց ծնողների, խնամակալների, պետության, պետական կառույցների կամ այլոց սեփականությունը, և ոչ էլ բարեսիրության անօգնական օբյեկտներ[4]: Նրանք իրավունքներով օժտված մարդկային էակներ են, և իրենց իսկ իրավունքների սուբյեկտներ, իրավունքը կրողներ: Երեխաներն օժտված են մարդկային նույն ընդհանուր հիմնարար իրավունքներով, ինչ մեծահասակները: Այդ իրավունքները, ինչպես և մեծահասակների դեպքում պետք է ապահովվեն և պաշտպանվեն, որպեսզի երեխաները կարողանան իրացնել իրենց ողջ ներուժը:

Բոլոր երեխաներն ունեն նաև հատուկ իրավունքներ և պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ, որոնցով ճանաչվում և պաշտպանվում են նրանց կարիքները: Որոշ երեխաներ, նաև ելնելով իրենց ազգային, ռասայական պատկանելությունից, սոցիալական վիճակից, հոգեսոցիալական, մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամություն ունենալու, սեռի կամ այլ հանգամանքներից պետք է ունենան լրացուցիչ անհրաժեշտ պաշտպանության և իրավունքների իրացման երաշխիքներ:

Այս ամենին զուգահեռ, այսօր թվային միջավայրն առավել քան երբևէ ավելի ու ավելի կարևոր է դառնում երեխաների կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում ճգնաժամային իրավիճակներում, սոցիալական ծառայությունների մատուցման, կրթության կազմակերպման և բազմաթիվ այլ հարցերում: Այս ամենի լավագույն օրինակներից է Covid-19 համավարակի ընթացքում առցանց տեխնոլոգիաների կիրառումը կրթության կազմակերպման նպատակով:

3 Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենք, 29.05.1996 թ., 1-ին հոդված ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?Do-cID=149836 Երեխայի իրավունքների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, 20.11.1989թ. 1-ին հոդված՝ https:// www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60503

4 Ընդհանուր բնույթի մեկնաբանություն թիվ 25 (2021). Թվային միջավայրում երեխաների իրավունքների վերաբերյալ CRC/C/GC/25, Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե, 2021 թ. մարտի 2, պարբ. 3. https://tbinternet. ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fGC%2f25&Lang=en

Թվային միջավայրը նոր հնարավորություններ է ընձեռում երեխաների իրավունքների իրացման համար, միևնույն ժամանակ նոր ռիսկեր առաջացնելով դրանց խախտումների և չարաշահումների տեսանկյունից:

Յուրաքանչյուր երեխայի իրավունքները պետք է հարգվեն, պաշտպանվեն և իրացվեն թվային միջավայրում ևս: Թվային տեխնոլոգիաների նորարարությունների ազդեցության ուղիները երեխաների կյանքի և իրավունքների վրա ունեն տարբեր շերտեր և փոխկապակցված են: Դրանց ազդեցությունն առկա է նույնիսկ այն դեպքերում, երբ երեխաներն անձամբ չեն օգտվում ինտերնետ տեխնոլոգիաներից (օրինակ, երբ ծնողներն առցանց հրապարակում են երեխայի մասին տեղեկություններ, լուսանկարներ և այլն):

Թվային տեխնոլոգիաների հասանելիությունը, մատչելիությունը և իմաստալից կիրառումը կարող է օգնել երեխաներին գիտակցել իրենց քաղաքացիական, քաղաքական, մշակութային, տնտեսական և սոցիալական իրավունքների ամբողջական շրջանակը: Այնուամենայնիվ, եթե չի ապահովվում թվային տեխնոլոգիաների կիրառման հարցում ներգրավվածությունը, այսինքն՝ այն հասանելի չէ տարբեր կարիքներ և դժվարություններ ունեցող երեխաների համար, կամ դժվարություններ և անապահով միջավայր է ձևավորում տարբեր երեխաների համար, ապա հասարակությունում առկա անհավասարություններն, ամենայն հավանականությամբ, էլ ավելի կխորանան և կառաջանան նորերը[5]:

Երեխաների իրավունքներ ամրագրող հիմնական միջազգային փաստաթուղթը Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան է: Կոնվենցիան առաջարկում է պատկերացում, համաձայն որի երեխան դիտվում է, որպես անհատ և որպես ընտանիքի ու համայնքի անդամ՝ իր տարիքին և հասունությանը համապատասխան իրավունքներով և պարտականություններով:

Կոնվենցիան ճանաչում է բոլոր երեխաների հիմնարար իրավունքները, արժանապատվությունը և նրանց բարօրությունն ու զարգացումն ապահովելու, ինչպես նաև երեխայի զարգացող հնարավորությունները և դրա հետ կապված նրա առանձնահատկություններին ու կարիքներին արձագանքելու անհրաժեշտությունը:

Հայաստանում երեխայի իրավունքների պաշտպանության հիմնարար փաստաթուղթն է ՀՀ Սահմանադրությունը և Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքը:

Երեխայի իրավունքների իրացման պաշտպանությունը հիմնվում է չորս կարևորագույն բաղադրիչների վրա, դրանք են՝

- երեխայի, խտրականության չենթարկվելու սկզբունքը՝ և՛ երեխա լինելու, և՛ այլ հիմքերով,
- երեխայի կյանքի և զարգացման սկզբունքը,
- երեխայի տեսակետները լսելու և հաշվի առնելու սկզբունքը,
- երեխայի լավագույն շահի սկզբունքը:

Երեխայի՝ խտրականության չենթարկվելու սկզբունքը

Երեխայի պաշտպանության և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կարևորագույն սկզբունքն է ցանկացած տեսակի խտրականության բացառումն՝ անկախ երեխայի կամ նրա ծնողի կամ օրինական խնամակալի ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ կարծիքից, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային վիճակից, հաշմանդամությունից, ծննդից կամ այլ կարգավիճակից:

Երեխան պետք է պաշտպանված լինի խտրականությունից կամ պատժի բոլոր ձևերից, որոնք բխում են երեխայի ծնողների, օրինական խնամակալների կամ ընտանիքի անդամների կարգավիճակից, գործունեության տեսակից, արտահայտած կարծիքներից կամ համոզմունքներից:

Խտրականության չենթարկվելու իրավունքը միջազգային իրավունքում մարդու իրավունքների հաստատված սկզբունքն է, սակայն երեխաների՝ խտրականության ենթարկվելը

5 Ibid, պարբ. 4

պատմականորեն ավելի քիչ ուշադրության է արժանացել: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան ճանաչում է երեխաների բնածին հիմնարար իրավունքները և ազատությունները: Այս համատեքստում խտրականության արգելքի սկզբունքը կարևորագույն նշանակություն ունի հաշվի առնելով, որ երեխաների իրավունքները ոտնահարելու հիմնական պատճառներից է խտրականությունը: Սահմանափակ միջոցների վկայակոչումը՝ որպես երեխաների որևէ խմբի նկատմամբ խտրականության արդարացում անթույլատրելի է:

Չնայած նրա, որ Կոնվենցիան նշում է խտրականության որոշակի հիմքեր, այն ընդունում է նաև խտրականության այլ հիմքերի առկայությունը, որոնցից երեխաներն իրավունք ունեն պաշտպանվելու: Ավելին, Երեխայի իրավունքների կոմիտեն իր դիրքորոշումներում հատուկ արձանագրել է խտրականության մի շարք այլ հիմքեր, ներառյալ՝ սեռի, սեռական կողմնորոշման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող երեխաների նկատմամբ խտրականությունը[6]:

Երեխայի՝ խտրականությունից պաշտպանված լինելու իրավունքը չի նշանակում, որ բոլոր երեխաների հետ պետք է վարվել նույն կերպ: Այս սկզբունքը նշանակում է, որ պետք է տարբերել խտրական և տարբերակված վերաբերմունքը, քանի որ երբեմն երեխաների որոշակի խմբերի իրավունքների խթանման համար առաջանում է հատուկ միջոցներ իրականացնելու անհրաժեշտություն:

Անհրաժեշտ է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ, երբ նրանք խտրական վերաբերմունքի են ենթարկվում երեխա լինելու հանգամանքից ելնելով, ինչպես նաև խտրականությունը տարբերվող՝ մասնավորապես հաշմանդամության, սոցիալ-տնտեսական, էթնիկ կամ ազգային ծագման, լեզվի, սեռի կամ որևէ այլ հիմքով, փոքրամասնությունների և բնիկ երեխաների, ապաստան հայցող, փախստական, միգրանտ, թրաֆիքինգի կամ սեռական շահագործման ենթարկված, այլընտրանքային խնամքի տակ, ազատությունից զրկված և այլ խոցելի իրավիճակներում գտնվող երեխաների նկատմամբ[7]:

Թվային տեխնոլոգիաներից օգտվելիս խտրականության չենթարկվելու իրավունքը պահանջում է, որ թվային միջավայրը բոլոր երեխաների համար հասանելի լինի հավասար և արդյունավետ կերպով՝ յուրաքանչյուրի համար մատչելի ձևով: Պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները «թվային բացառումը»՝ թվային միջավայրի անհավասար տարածումը հաղթահարելու համար:

Դա ներառում է երեխաների համար անվճար, ամենակարևորը՝ անվտանգ թվային միջավայրի հասանելիության տրամադրում, դրա համար նախատեսված հանրային վայրերում և այնպիսի քաղաքականությունների ու ծրագրերի մշակում, որոնք նպաստում են թվային տեխնոլոգիաների մատչելիությանը և խելամիտ օգտագործմանը կրթական միջավայրում, համայնքում կամ տանը: Թվային տեխնոլոգիաների կիրառման ընթացքում երեխաները խտրականության են ենթարկվում այն դեպքում, երբ նրանց հասանելի չեն թվային տեխնոլոգիաները կամ ծառայությունները: Թեև խտրականության կարող են ենթարկվել նաև տեխնոլոգիաների օգտագործման արդյունքում առերեսվելով ատելության խոսքի դրսևորումների, բռնության կամ անարդար վերաբերմունքի:

Խտրականության այլ ձևեր կարող են առաջանալ, երբ տեղեկատվության զտմանը, պրոֆիլավորմանը, դրանց հիման վրա որոշումների կայացմանը հանգեցնող ավտոմատացված գործընթացները հիմնվում են երեխայի վերաբերյալ կողմնակալ, ոչ ամբողջական[8] կամ ապօրինի կերպով ստացված տվյալների վրա: Օրինակ՝ պատկերացրեք համացանցում

6 Ընդհանուր բնույթի մեկնաբանություն թիվ 3 (2003): ՄԻԱՎ/ՁԻԱՀ և երեխայի իրավունքները: Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե. CRC/GC/2003/3, 2003 թ. մարտի 17. https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbol-no=CRC%2fGC%2f2003%2f3&Lang=en

7 Ընդհանուր բնույթի մեկնաբանություն թիվ 25 (2021). Թվային միջավայրում երեխաների իրավունքների վերաբերյալ CRC/C/ GC/25, Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե, 2021 թ. մարտի 2, պարբ. 11. https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treaty-bodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fGC%2f25&Lang=en

8 R. Allen QC, D. Masters (2020), Regulating for an Equal AI: A new role for Equality Bodies. Meeting the new challenges to equality and non-discrimination from increased digitisation and the use of Artificial Intelligence, Equinet (2020) https://equineteurope.org/wp-content/uploads/2020/06/ai_report_digital.pdf

հաշմանդամություն ունեցող երեխայի լուսանկարի տեղադրումը խտրական մեկնաբանությամբ, որը կարող է դրսևորվել նաև նրա նկատմամբ խղճահարություն, ափսոսանք հարուցող խոսքով: Կամ, պատկերացրեք, երեխաների հանդեսի լուսանկարների տեղադրումը համացանցում, որտեղ գուցե տղա երեխաները հանդես են եկել ուսուցչուհու կամ այլ կնոջ կերպարով: Այդ լուսանկարներն անբարեխիղճ անձանց կողմից կարող են շրջանառվել այլ համատեքստում, օրինակ՝ երեխաներին ներկայացնելով որպես տրանսգենդեր, զուգակցելով դա տրանսգենդեր անձանց նկատմամբ ատելության խոսքի դրսևորմամբ: Նման իրավիճակներում թիրախում հայտնվում և խտրականության զոհ է դառնում երեխան: Իսկ թվային միջավայրում հայտնված նյութերը հետագայում կարող են ենթարկվել բազմապիսի ավտոմատացված մշակումների, ազդելով այդ երեխաների մասին որոշումների կայացման վրա թե՛ թվային միջավայրում, թե՛ անցանց կյանքում:

Երեխայի գոյատևելու և զարգացման սկզբունքը

Գոյատևման և զարգացման սկզբունքը երեխայի համար երաշխավորում է առաջին հերթին կյանքի իրավունքը, ինչպես նաև տնտեսական և սոցիալական իրավունքների առավելագույն իրացման հնարավորությունը: Այն իրացվում է առողջության ապահովման, պատշաճ սնուցման, սոցիալական երաշխիքների, բավարար կենսամակարդակի, առողջ և անվտանգ միջավայրի, կրթության և հանգստի և այլ իրավունքների հետ համակցված համապարփակ կերպով: Ըստ էության, այն ներառում է «արժանապատիվ կյանք ապահովելու համար անհրաժեշտ պայմաններ ձևավորելու» պարտավորությունը:

Թվային միջավայրի ընձեռած հնարավորությունները գնալով առավել կարևոր դեր են կատարում երեխաների զարգացման գործում և կարող են կարևոր նշանակություն ունենալ երեխաների կյանքի և գոյատևման համար, հատկապես ճգնաժամային իրավիճակներում:

Թվային միջավայրում առկա են բազմաթիվ վտանգներ՝ կապված նյութերի բովանդակության, հնարավոր կապերի ձևավորման ու շփումների հետ, որոնք կարող են իրականացվել նաև հանցագործների կամ ահաբեկչական ու ծայրահեղական զինված խմբավորումների կողմից: Այդ վտանգները ներառում են.

- բռնություն և սեռական բովանդակություն,
- կիբերագրեսիա և հետապնդումներ,
- վտանգավոր խաղեր,
- շահագործում և չարաշահումներ, ներառյալ սեռական շահագործումը և չարաշահումը,
- ինքնասպանության կամ կյանքին սպառնացող գործողությունների խթանում կամ դրդում:

Կառավարությունը պետք է բացահայտի և լուծի այն ռիսկերը, որոնց բախվում են երեխաները տարբեր համատեքստերում, այդ թվում, լսելով նրանց տեսակետները՝ կապված իրենց սպառնացող ռիսկերի բնույթի հետ:

Թվային սարքերի օգտագործումը չպետք է ունենա վնասակար ազդեցություն, ինչպես նաև չպետք է փոխարինի երեխաների կամ երեխաների և ծնողների կամ խնամակալների միջև անհատական փոխհարաբերությունները: Տեխնոլոգիաների կիրառման հետևանքներին անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել կյանքի առաջին տարիներին, երբ ուղեղի պլաստիկությունը շատ բարձր է, և սոցիալական միջավայրը, մասնավորապես ծնողների և խնամողների հետ հարաբերությունները, կարևոր են երեխաների ճանաչողական, հուզական և սոցիալական զարգացման ձևավորման համար: Վաղ տարիներին կարող են պահանջվել կանխարգելիչ միջոցներ՝ կախված տեխնոլոգիաների նախագծումից, նպատակից և օգտագործումից: Ծնողների, խնամատար ծնողների, խնամակալների և մանկավարժների համար պետք է անցկացվեն թվային սարքերի պատշաճ օգտագործման վերաբերյալ դասընթացներ և տրվեն խորհուրդներ՝ հաշվի առնելով երեխաների և դեռահասների զարգացման վրա թվային տեխնոլոգիաների

ազդեցության վերաբերյալ հետազոտությունները, հատկապես վաղ մանկության և հուզական զարգացման կարևոր փուլերի ընթացքում[9]:

Երեխայի տեսակետները լսելու և հաշվի առնելու սկզբունքը

Երեխան ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այդ իրավունքը ներառում է ցանկացած բնույթի տեղեկություններ և գաղափարներ որոնելու, ստանալու և հաղորդելու ազատությունը՝ անկախ սահմաններից, գրավոր կամ տպագիր ձևով, ստեղծագործության տեսքով կամ այլ միջոցներով՝ ըստ երեխայի ընտրության:

Երեխայի կարծիքը պետք է հաշվի առնվի հիմք ընդունելով նրա տարիքը և հասունության աստիճանը: Երեխային պետք է տրվի իր կարծիքն արտահայտելու հնարավորություն: Բացի այդ, անհրաժեշտ է աջակցել այն երեխաներին, որոնք խոչընդոտների են հանդիպում իրենց կարծիքը լսելի դարձնելու գործընթացում, այդ թվում տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող երեխաներին, տվյալ լեզվին չտիրապետող, ներառյալ ժեստերի լեզվով հաղորդակցվող, կամ այլ հիմքով բացառման վտանգի գոտում գտնվող երեխաներին:

Այդ կարծիքները կարող են արտահայտվել տանը, դպրոցում, իրենց համայնքներում և անգամ կառավարությունների առջև: Երեխաների տեսակետները պետք է լսվեն և հաշվի առնվեն քաղաքական գործընթացներում: Երեխաների տեսակետները պետք է լսված լինեն այն որոշումների կայացման գործընթացում, որոնք կարող են ազդել իրենց վրա ներկայում կամ ապագայում[10]:

Այստեղ կրկին կարևոր է դառնում թվային միջավայրը, որը երեխաներին իրենց ձայնը լսելի դարձնելու հնարավորություն է ընձեռում: Թվային տեխնոլոգիաների օգտագործումը կարող է օգնել գիտակցել երեխաների մասնակցության կարևորությունը տեղական, ազգային և միջազգային մակարդակներում: Անհրաժեշտ է ձևավորել նպաստավոր միջավայր, որպեսզի երեխաները իրազեկված լինեն և ունենան այն թվային տեխնոլոգիաների հասանելիությունը, որոնք կօգնեն արտահայտել իրենց կարծիքը,մեծերի հետ համատեղ մասնակցել իրենց իրավունքների շուրջ քննարկումներին, այդ թվում անանուն կերպով, եթե կա դրա անհրաժեշտությունը, անհատապես կամ խմբով պայքարել իրենց իրավունքների համար:

Պետությունները թվային միջավայրը կարող են օգտագործել երեխաների հետ խորհրդակցելու օրենսդրական, վարչական և այլ միջոցառումների վերաբերյալ, և ապահովելու, որ նրանց տեսակետները լրջորեն դիտարկվեն, և որ երեխաների մասնակցությունը չհանգեցնի չարդարացված վերահսկողության կամ տվյալների հավաքագրման, ինչը կարող է խախտել նրանց մասնավոր կյանքի անձեռնամխելիության, այսինքն՝ գաղտնիության իրավունքը, կարծիքի արտահայտման ազատությունը[11]:

Երեխայի լավագույն շահի սկզբունքը

Երեխաներին վերաբերող բոլոր որոշումներում ու գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահին: Դա նշանակում է, որ երեխայի կամ երեխաների խմբի վրա հնարավոր ազդեցություն ունեցող որոշումներ

9 Ընդհանուր բնույթի մեկնաբանություն թիվ 25 (2021). Թվային միջավայրում երեխաների իրավունքների վերաբերյալ CRC/C/ GC/25, Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե, 2021 թ. մարտի 2, պարբ. 15. https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treaty-bodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fGC%2f25&Lang=en

10 Ընդհանուր բնույթի մեկնաբանություն թիվ 12 (2009). Լսված լինելու երեխայի իրավունքը: CRC/C/GC/12, Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե, 2009 թ. հուլիսի 20. https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?sym-bolno=CRC%2fC%2fGC%2f12&Lang=en

11 Ընդհանուր բնույթի մեկնաբանություն թիվ 25 (2021). Թվային միջավայրում երեխաների իրավունքների վերաբերյալ CRC/C/ GC/25, Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե, 2021 թ. մարտի 2. https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/ Download.aspx?symbolno=CRC%2fC%2fGC%2f25&Lang=en

կայացնելիս, անհրաժեշտ է ուսումնասիրել և գնահատել, թե ինչ դրական կամ բացասական ազդեցություն կունենա այդ որոշումը երեխաների վրա[12]:

Երեխայի լավագույն շահի գնահատումը և որոշման հիմնավորումը պետք է ցույց տա, որ այս իրավունքը հստակորեն հաշվի է առնվել:

Թվային միջավայրն ի սկզբանե նախագծված չի եղել երեխաների համար: Պետք է ապահովել, որ թվային միջավայրի ապահովման, կարգավորման, նախագծման, կառավարման և օգտագործման հետ կապված բոլոր գործողություններում առաջնային խնդիր լինի յուրաքանչյուր երեխայի լավագույն շահը[13]:

Այս ձեռնարկում ներկայացված երեխաների իրավունքների վերաբերյալ տեղեկությունները ամբողջական չեն:

Երեխայի համար մատչելի լեզվով իրավունքները բացատրելու համար ձեզ կարող են օգնել նաև հետևյալ փաստաթղթերը, որոնցում Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան ներկայացված է երեխաների համար մատչելի կերպով՝

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա. երեխաների համար նախատեսված տարբերակ «Ես երեխա եմ» Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան՝ երեխաներին հասանելի լեզվով

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. Ա
ԽԱՂ «ԻՄԱՍՏԱՎՈՐԵԼՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ»

Խաղը կարող է կիրառվել ցանկացած խմբի երեխաների համար: Տարիքային յուրաքանչյուր խմբի հետ անհրաժեշտ է գործածել երեխայի համար մատչելի լեզու և բառապաշար:

Պետք է հաշվի առնել, որ խմբում կարող են լինել տեսողության խնդիրներ ունեցող երեխաներ, որոնց համար անհրաժեշտ կլինի ընթերցել քարտերի բովանդակությունը կամ պատրաստել ավելի խոշոր տառերով քարտեր:

Եթե երեխան տիրապետում է բրայլյան համակարգով կարդալու և գրելու հմտություններին, ապա կարող եք ապահովել Բրայլի տառատեսակով գրված քարտը: Երեխաների տարիքից և հասունության աստիճանից ելնելով, կարող եք ընտրել, թե որ իրավունքներով քարտերը բաժանել, իսկ որոնք թողնել հետագա քննարկման համար:

12 Ընդհանուր բնույթի մեկնաբանություն թիվ 14 (2013) իր լավագույն շահը որպես առաջնային հաշվի առնելու իրավունքի վերաբերյալ (3-րդ հոդվածի, 1-ին պարբ.) CRC/C/GC/14, Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե, 2013 թ. մայիսի 29.
https://www.google.com/url?q=https://tbinternet.ohchr.org/_layouts/15/TreatyBodyExternal/Download.aspx?symbolno%3DCRC%252FGC%252F2003%252F3%26Lang%3Den&sa=D&source=editors&ust=1674545716877521&usg=AOvVaw3IBpFwqRiqN3aqUHPtlHO1

13 Ընդհանուր բնույթի մեկնաբանություն թիվ 25 (2021). Թվային միջավայրում երեխաների իրավունքների վերաբերյալ CRC/C/ GC/25, Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե, 2021 թ. մարտի 2, պարբ. 12.
https://www.google.com/url?q=https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno%3DCRC/C/GC/25%26Lang%3Den&sa=D&source=editors&ust=1674545716877771&usg=AOvVaw1HvL2q95spGINfK4cBjycD

Նախապատրաստական աշխատանքներ

Նախքան այս վարժությունը կատարելը, ուսուցանողը պետք է մանրամասն ուսումնասիրի երեխաների իրավունքները: Դա կարող եք անել հիմք ընդունելով Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, ինչպես նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը:

Առանձին քարտերի վրա գրեք երեխաների իրավունքները՝ յուրաքանչյուր քարտի վրա մեկ իրավունքի օրինակ (Իրավունքների քարտերը կարող եք տպել նաև Կոնվենցիայի «Հավելված 1 -ից»:

Վարժության երկրորդ տարբերակի համար պատրաստեք լրացուցիչ քարտեր՝ դպրոց, տուն, բակ, մարզասրահ, խաղահրապարակ գրառումներով:

Վարժության կատարում

Երեխաներին բաժանեք Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հոդվածները՝ առանձին քարտերի վրա: Յուրաքանչյուրին հանձնարարեք մտաբերել իրական պատմություն կամ երևակայությամբ պատկերացնել որևէ դեպք իրենց կամ իրենց դասընկերների, ընկերների կյանքից, երբ այդ իրավունքը կիրառվել, կամ ըստ իրենց՝ խախտվել է:

Պատրաստվելու համար նրանց տրամադրեք 5-10 րոպե ժամանակ:

Ընդհանուր լսարանում քննարկեք օրինակները. լսեք յուրաքանչյուր երեխային, լսեք նաև իրական պատմության կամ մտացածին դեպքի վերաբերյալ մյուս երեխաների կարծիքները:

Վարժության երկրորդ տարբերակ

Սա վարժության կիրառման մեկ այլ տարբերակն է, որը փոքր-ինչ բարդացնում է առաջադրանքը՝ իրավունքների մասին քարտերի հետ մեկտեղ երեխաներին բաժանեք նաև քարտեր դպրոց, տուն, բակ, մարզասրահ կամ խաղահրապարակ գրառումներով: Այսինքն, յուրաքանչյուր երեխայի՝ երկու քարտ, որոնցից մեկի վրա գրված կլինի իրավունքը, իսկ մյուսի վրա՝ վայրը: Երեխաներին հանձնարարեք մտաբերել իրական պատմություններ կամ պատկերացնել դեպքեր, որոնք կապված կլինեն միաժամանակ նշված վայրի և իրավունքի հետ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.Բ

Խաղը կարող է կիրառվել ցանկացած խմբի երեխաների համար: Տարիքային յուրաքանչյուր խմբի հետ անհրաժեշտ է գործածել երեխայի համար մատչելի լեզու և բառապաշար: Պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր երեխա ունի հաղորդակցման իր անհարժեշտությունները և կարիքները:

Նախապատրաստական աշխատանքներ

Նախքան այս վարժությունը կատարելը, ուսուցանողը պետք է մանրամասն ուսումնասիրի երեխաների իրավունքները, այդ թվում, ցանկալի է ուսումնասիրել նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և/կամ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան:

Վարժության համար անհրաժեշտ են ֆլիպչարտի թղթեր, որոնց վրա երեխաները կարող են ներկայացնել իրենց հռչակագիրը, գունավոր մարկերներ, գունավոր թղթիկներ, նկարելու, կոլաժներ պատրաստելու համար օգտակար այլ պիտույքներ՝ ըստ հնարավորության և ցանկության:

Վարժության կատարում

Երեխաներին բաժանեք խմբերի, յուրաքանչյուր խմբում 3-5 երեխա: Խմբերի կարող եք բաժանել հետևյալ կերպ՝ խնդրեք մասնակիցներին հաշվել 1-ից 3-ը (կամ համապատասխանաբար՝ 5-ը):

Խնդրեք, որպեսզի յուրաքանչյուր խումբ կազմի իրավունքների հռչակագիր: Բացատրեք, որ հռչակագրում անհրաժեշտ է ներառել իրավունքներ, պարտականություններ, նշել, թե ովքեր են պատասխանատու իրավունքների իրացման համար, նկարագրել իրավունքների խախտման դեպքում պատասխանատվության միջոցները:

Երեխաները հռչակագիրը կարող են կազմել նկարի, գծապատկերի տեսքով, ինչպես նաև ձայնագրել և պատրաստել տեսանյութ: Երեխաներին ընձեռեք սեփական կարծիքն իրենց ցանկությամբ, ազատորեն արտահայտելու հնարավորություն, սակայն հիշեցրեք, որ հռչակագիրը պետք է մատչելի լինի մյուս երեխաների, այդ թվում՝ լսողության, տեսողության խնդիր ունեցող երեխաների համար ևս:

Հռչակագիրը պատրաստելու համար երեխաներին տրամադրեք 20-30 րոպե: Առաջադրանքն ավարտելուն պես խնդրեք, որպեսզի խմբերը ներկայացնեն իրենց հռչակագրերը և ամբողջ խմբի հետ միասին քննարկեք յուրաքանչյուրը:

Քննարկեք նաև այն, թե յուրաքանչյուր իրավունք կամ պարտականություն ինչպես պետք է կիրառվի և գործի տարբեր երեխաների համար (աղջիկ, տղա, տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող, տեսողության խնդիրներ ունեցող, լսողության խնդիրներ ունեցող, աուտիզմ ունեցող, մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաներ և այլն):

ԹԵՄԱ 2
Ի՞ՆՉ Է ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՅՆ ԴՐՍԵՎՈՐՎՈՒՄ ԱՌՑԱՆՑ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում երեխաները պետք է կազմեն հիմնական պատկերացումներ և ձեռք բերեն գիտելիքներ ատելության խոսքի վերաբերյալ:

Թեմայի նպատակն է, որպեսզի սովորողները՝
- հստակ պատկերացում կազմեն ատելության խոսքի վտանգավոր հետևանքների մասին, թե ինչպես է այն ազդում անհատի և ամբողջ հասարակության վրա,
- կարողանան համեմատականներ անցկացնել խոսքի ազատության և ատելության խոսքի միջև,
- զուգահեռներ անցկացնեն ատելության խոսքի առցանց և անցանց դրսևորումների միջև,
- ծանոթանան ատելության խոսքի հետ կապված կարևոր բացատրություններին, սահմանումներին և միջազգային փաստաթղթերին:

ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր ոք ունի սեփական կարծիք ունենալու և ազատ արտահայտվելու իրավունք, այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Այդուհանդերձ, արտահայտվելու և սեփական կարծիք ունենալու ազատությունը բացարձակ իրավունք չէ, և այն չպետք է ոտնահարի այլոց իրավունքները:

Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) և եվրոպական միջազգային իրավական փաստաթղթերը սահմանում են նաև խոսքի արտահայտման ազատության սահմանափակման անհրաժեշտությունը:

Խոսքի ազատության ցանկացած սահմանափակում պետք է լինի իրավաչափ, որը կնպաստի ատելության խոսքի կանխարգելմանն ու մարդու իրավունքների պաշտպանությանը: Ելնելով ատելության խոսքի բնույթից, ծանրության աստիճանից և շրջանառության ծավալից նախատեսվում է ոչ նյութական պատասխանատվություն, օրինակ՝ տեղեկությունը հերքել, կամ ներողություն խնդրել, նյութական/ֆինանսական պատասխանատվություն կամ փոխհատուցում պատվի և արժանապատվության պաշտպանության նպատակով, և տուգանք, ազատազրկում կամ այլ բնույթի քրեական պատասխանատվություն: Քրեական պատասխանատվությունը վրա է հասնում ատելության խոսքի առավել վտանգավոր դրսևորումների դեպքում: Անձի իրավունքների տեսանկյունից մեկնակետը արտահայտման ազատության իրավունքի, հանդուրժողականության և արժանապատվության նկատմամբ հավասար հարգանքի հիմնարար նշանակության ճանաչումն է, և այդ բոլոր իրավունքները երաշխավորված են Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից ընդունված բազմաթիվ միջազգային փաստաթղթերով: Եվ որպեսզի անձի խոսքի ազատությունը անհարկի չսահմանափակվի՝ միջպետական կոնվենցիոն պարտավորությունների շրջանակներում սահմանվել են որոշակի չափորոշիչներ: Նման չափորոշիչներից մեկը Ռաբաթի գործողությունների ծրագրի շեմային թեստն է[14]: Թեստը սահմանում է այն նվազագույն պայմանները, որոնց դեպքում անձն ատելության խոսքի դրսևորման համար կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: Եվ թեև այն մշակվել է այս նպատակով, սակայն կարող է կիրառվել հասկանալու համար ատելության խոսքի կարևոր բաղադրիչները: Կարևոր չէ, որ երեխաները տիրապետեն ատելության խոսքի քրեական պատասխանատվության ենթարկվելու իրավական բաղադրիչներին, սակայն այս թեստի բաղադրիչները կարող են օգնել հասկանալ, թե ինչ ազդեցություն և ինչ պատճառներ ու հետևանքներ կարող է ունենալ ատելության խոսքը:

Ըստ Ռաբաթի գործողությունների ծրագրի շեմային թեստի, ատելության խոսքի դրսևորման հիմնական բաղադրիչներն են՝

(1) **Համատեքստը.** Համատեքստը մեծ կարևորություն ունի, երբ գնահատվում է, թե կարող են արդյոք որոշ հայտարարություններ հրահրել թիրախային խմբի նկատմամբ խտրականություն, թշնամանք կամ բռնություն, և դա կարող է ուղղակիորեն առնչվել դիտավորությանը

14 Մեկ – էջիկ «ատելության հրահրում» – Ռաբաթ թեստ https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Opinion/Seminar-Rabat/Rabat_threshold_test.pdf
Ռաբաթի գործողությունների պլանը Rabat Plan of Action ազգային, ռասայական կամ կրոնական ատելության քարոզչությունն արգելելու մասին, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում. A/HRC/22/17/Add.4, (Հավելված). ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողով, 2013 թ. հունվարի 13 https://www.ohchr.org/sites/default/files/Rabat_draft_outcome.pdf

և/կամ հետևանքին: Համատեքստի վերլուծությունն ատելության խոսքը պետք է դիտարկի խոսքի արտահայտման և տարածման ժամանակ տիրող սոցիալական և քաղաքական իրավիճակներում:

(2) **Արտահայտող անձը.** Պետք է հաշվի առնել հասարակության մեջ ենթադրյալ ատելության խոսք արտահայտողի դիրքը կամ կարգավիճակը, մասնավորապես անհատի կամ կազմակերպության դիրքը այն լսարանի համատեքստում, որին ուղղված է ելույթը:

(3) **Դիտավորություն.** Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին Միացյալ ազգերի կազմակերպության դաշնագրի 20-րդ հոդվածը նախատեսում է մտադրությունը: Անփութությունը և անխոհեմությունը բավարար չեն, որ արարքը համարվի հանցագործություն, սույն հոդվածը նախատեսում է «շահերի պաշտպանություն» և «հրահրում», այլ ոչ թե նյութի սոսկ տարածում կամ շրջանառություն: Այս առումով, դա պահանջում է եռակողմ կապ խոսքի թիրախի, խոսքն արտահայտողի և լսարանի միջև:

(4) **Բովանդակությունը և ձևը.** Ելույթի բովանդակությունը քննարկման ենթակա առանցքային խնդիրներից մեկն է և հրահրման կարևոր տարրը: Բովանդակության վերլուծությունը կարող է ներառել խոսքի սադրիչ և ուղղակի գոյություն ունենալու աստիճանը, ինչպես նաև խոսքի մեջ արտահայտած փաստարկների ձևը, ոճը, բնույթը կամ փաստարկների միջև հավասարակշռությունը:

(5) **Խոսքի ազդեցության աստիճանը.** Խոսքի ազդեցության աստիճանը ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են խոսքի հասանելիությունը՝ ում է այն հասանելի, խոսքի հանրային բնույթը, լսարանի մեծությունն ու քանակը: Պարզելու համար, թե հանրային է արդյոք խոսքը կարող են հաշվի առնվել, նաև տարածման միջոցները, օրինակ՝ թռուցիկների, հիմնական լրատվամիջոցների կամ համացանցի միջոցով, ինչպես նաև հաղորդակցման հաճախականությունը, քանակն ու տևողությունը, ունեին, թե ոչ ունկնդիրները հրահրման վրա ազդելու միջոց, հայտարարությունը (կամ նյութը) շրջանառվում է սահմանափակ միջավայրում, թե՞ հասանելի է հասարակության լայն շրջանակի համար:

(6) **Հավանականությունը, ներառյալ անխուսափելիությունը.** Հրահրումը, որպես այդպիսին անավարտ հանցագործություն է: Խոսքի միջոցով հրահրվող գործողությունը պարտադիր չէ, որ կատարվի, ելույթը հանցագործություն համարելու համար: Այնուամենայնիվ, պետք է արձանագրվի ռիսկի որոշակի աստիճան: Դա նշանակում է, որ պետք է արձանագրվի ելույթի՝ թիրախային խմբի դեմ իրական գործողությունների խթանման ողջամիտ հավանականությունը, հաշվի առնելով, որ այդպիսի պատճառահետևանքային կապը պետք է լինի հնարավորինս ուղղակի:

> « (...) «Ատելության խոսքը ներառում է արտահայտման բոլոր այն ձևերը, որոնք հրահրում, խթանում, տարածում կամ արդարացնում են բռնություն, ատելություն կամ խտրականություն որևէ անձի կամ անձանց խմբի նկատմամբ, կամ որոնք նսեմացնում են նրանց՝ իրենց իրական կամ վերագրվող անձնական հատկանիշների կամ կարգավիճակի պատճառով, ինչպիսիք են «ռասան», գույնը, լեզուն, կրոնը, ազգությունը, ազգային կամ էթնիկ ծագումը, տարիքը, հաշմանդամությունը, սեռը, գենդերային ինքնությունը և սեռական կողմնորոշումը»:
>
> Նախարարների կոմիտեի CM/Rec(2022)16, Եվրոպայի խորհուրդ

Ատելության խոսքը հազվադեպ կարելի է բնութագրել միանշանակ գնահատականներով: Կարծիքները տարբեր են ինչպես դրա դասակարգման, այնպես էլ լուծման եղանակների վերաբերյալ:

Տարակարծությունները մասամբ պայմանավորված են նրանով, որ այս երկու հարցերը հիմնականում միասին են դիտարկվում. եթե որևէ արտահայտություն դասակարգվում է որպես ատելության խոսք, ապա թվում է, թե դա ինքնըստինքյան ենթադրում է դրա դեմ ուղղված որոշակի գործողություն: Իսկ եթե այդպիսի գործողություն նախատեսված չէ, ապա մենք համարում ենք, որ դա ընդունելի է կամ, առնվազն, հանդուրժելի: Սա նշանակում է, որ այն սահմանումը, որ մենք կիրառում ենք պետք է մեզ հուշի, թե երբ է գործելու ժամանակը: Կան մարդիկ, ովքեր դեմ են ատելության խոսքի դեմ գործողություններ ձեռնարկելուն, քանի որ համարում են, որ դա արտահայտման ազատության անընդունելի սահմանափակում է: Դրանից ելնելով՝ նրանք կիրառում են «ատելության խոսք» ձևակերպումը միայն դրա ամենածայրահեղ դրսևորումների նկատմամբ, օրինակ՝ երբ նման արտահայտությունը պարունակում է ուղղակի սպառնալիք մարդու կյանքին կամ անվտանգությանը[15]:

Այս Ձեռնարկի հիմքում ընկած է այն խոր համոզումը, որ առցանց տարածքը հանրային տարածք է և, հետևաբար, ժողովրդավարական հասարակության բոլոր սկզբունքները կարող են և պետք է կիրառվեն նաև առցանց:

Այս համատեքստում, ատելության խոսքի դեմ պայքարի մեջ չափազանց կարևոր է հենց դեռահասների և երիտասարդների դերը:

Երիտասարդները քաղաքացի են նաև առցանց տիրույթում, իսկ դա նշանակում է, որ նրանք կարող են արտահայտել իրենց մտահոգությունները առցանց, կարող են միջոցներ ձեռնարկել և պատասխանատվության կանչել նրանց, ովքեր ոտնահարում են մարդու իրավունքները նաև վիրտուալ տարածքում:

Առցանց տարածքը նաև չափազանց մասնակցային է, ներառում է նաև համացանցի կառավարման գործընթացների մասին իրազեկություն: Համացանցի ի հայտ գալու հետ մարդկանց միջև հաղորդակցման հնարավորությունները վիթխարի փոփոխությունների ենթարկվեցին: Տեսականորեն համացանցը մեզ հնարավորություն ընձեռեց հաղորդակցվել գրեթե ցանկացած մարդու հետ աշխարհի ցանկացած կետում: Այժմ համացանցի շնորհիվ աշխարհի ցանկացած, շատերի համար անհայտ, փոքր մի անկյունում ծագած և ձևավորված միտքը կարող է հասանելի դառնալ բոլորի համար: Համացանցից օգտվելու հնարավորություն ունեցող յուրաքանչյուր ոք այժմ և՛ հրատարակիչ է, և՛ բանախոս: Սա մի նորամուծություն է, որից քչերը կցանկանային հրաժարվել: Սակայն, միևնույն ժամանակ մեզ չպետք է զարմացնի այն հանգամանքը, որ մշտապես ընդլայնվող առցանց հաղորդակցության ոլորտն արտացոլում է այն բոլոր խնդիրները և արձագանքում է այն բոլոր բարդություններին, որ մարդիկ մշտապես արձանագրել են իրենց իրական կյանքում: Անհիշելի ժամանակներից անհանդուրժողականությունն ու «ատելությունը» մարդկային հանրույթի կենսակերպի մասն են կազմել:

Համաձայն որոշ հետազոտությունների՝ վերջին տարիներին վերոնշյալ դրսևորումների աճ է արձանագրվել:

Խնդիրն այն է, որ եթե տարբերվողի նկատմամբ հանդուրժողականությունը նվազում է, և այդ անհանդուրժողականությունը զսպող միջոցները չեն վերահսկվում, ապա անխուսափելիորեն կգտնվեն եղանակներ, այդ անհանդուրժողականությունն ու ատելությունն արտահայտելու համար, ինչպես մարդկանց արարքների, այնպես էլ՝ խոսքի, կամ արտահայտման այլ ձևերի միջոցով:

Համացանցն արտահայտվելու նոր ձևեր ստեղծեց, ինչպես նաև նոր ճանապարհներ բացեց այդ ասելիքը ավելի մեծ թվով մարդկանց հասանելի դարձնելու համար: Միևնույն ժամանակ, «վիրտուալ» խոսքը զսպող հանգամանքները շատ ավելի քիչ են, քան «ոչ վիրտուալ» խոսքը: Հաճախ մարդիկ առցանց տիրույթում արտահայտում են այնպիսի կարծիքներ, որը երբեք չէին բարձրաձայնի հանրայնորեն:

15 Էջանիշեր. Մարդու իրավունքների կրթության միջոցով ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարի ձեռնարկ», Է. Քին, Մ. Ջորջեսկու, Ռ. Գոմես, Եվրոպայի Խորհուրդ, վերանայված հրատարակություն (2020), էջ 189. https://rm.coe.int/bookmarks-ar-9-web/1680a52786

Երիտասարդներն ատելության առցանց դրսևորումներին ընդամենը պասիվ հետևողներ չեն. նրանցից ոմանք արդեն իսկ վերածվել են այդ երևույթի զոհերի, իսկ ոմանք էլ անցել հալածողների շարքերը:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ատելության խոսքի առցանց դրսևորումների մշտադիտարկում իրականացնելը չափազանց դժվար է, որովհետև մարդիկ իրենց ցանկացած խոսքն ասոցացնում են խոսքի ազատության իրավունքի հետ: Իրականում, հենց սա է պատճառը, որ նրանք, ովքեր ունեն ատելություն տարածելու և քարոզելու նպատակ, դա հեշտությամբ կարող են իրականացնել առցանց, ինչը բարդացնում է նաև իրավասու մարմինների կողմից այդ գործընթացի վերահսկումը: Որոշ կազմակերպություններ փորձել են գնահատել խնդրի ծավալները: Բոլորը միակարծիք են, որ նկատվում է ատելության խոսքի դրսևորումների աճի միտում:

Այլ հետազոտությունների շրջանակներում փորձել են պարզել, թե որքան հաճախ են հանդիպում երիտասարդներն ատելության խոսքի առցանց դրսևորումների:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ըստ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) Ընդհանուր քաղաքականության թիվ 15 Հանձնարարականի ատելության խոսքը ենթադրում է արտահայտման մեկ կամ ավելի ձևերի օգտագործում, այսինքն՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ նվաստացման, ատելության կամ անարգման, ինչպես նաև այդ անձանց կամ խմբի նկատմամբ ցանկացած ոտնձգության, վիրավորանքի, բացասական կարծրատիպերի ձևավորման, խարանի կամ սպառնալիքի քարոզչություն, խթանում կամ հրահրում, և վերոնշյալ արտահայտման բոլոր ձևերի ցանկացած արդարացում, որը հիմնված է անձնական հատկանիշների կամ կարգավիճակի ոչ սպառիչ ցանկի վրա, ներառյալ՝ «ռասան», մաշկի գույնը, լեզուն, կրոնը կամ դավանանքը, ազգությունը, ազգային կամ էթնիկ պատկանելությունը, ինչպես նաև ծագումը, տարիքը, հաշմանդամությունը, սեռը, գենդերը, գենդերային ինքնությունը և սեռական կողմնորոշումը: ՌԱԵՀ-ի Հանձնարարականում «արտահայտում» նշանակում է ցանկացած ձևով, այդ թվում՝ էլեկտրոնային լրատվամիջոցներով խոսք և հրապարակում, ինչպես նաև դրանց տարածումը և պահպանումը:

Բացի այդ, Հանձնարարականի շրջանակում ընդգրկված արտահայտման ձևերը կարող են նաև ներառել ցեղասպանության հանցագործությունների, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների կամ պատերազմական հանցագործությունների հանրային ժխտում, նսեմացում, հիմնավորում կամ արդարացում, երբ դրանք դատարանի կողմից ճանաչվել են տեղի ունեցած, ինչպես նաև այդպիսի հանցագործություններ կատարած անձանց փառաբանում: Առավել ցայտուն օրինակով պատկերացնելու համար, թե ինչ աղետալի հետևանքներ կարող է ունենալ չկանխարգելված ատելության խոսքը, առաջարկվում է ուսումնասիրել ատելության բուրգի զարգաման հաջորդականությունը:



Նյութի աղբյուրը՝ «Հակազրպարտության լիգա»

Պայմանը, որ այդպիսի հանցագործությունների կատարման փաստը պետք է հաստատված լինի դատարանների վճռով, նպատակ ունի ապահովելու, որ որոշակի վարքագծի վերաբերյալ ընդարձակ մեղադրանքներն այնուհետև հիմք չդառնան այնպիսի պնդումների համար, թե կոնկրետ հայտարարություններ համարժեք են ատելության խոսքին:

ԻՆՉՊԵ՞Ս ՏԱՐԲԵՐԱԿԵԼ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Նկատել ե՞ք, որ վերջին ժամանակներում մեր հասարակությունում բավական տարածված է ատելության խոսք եզրույթն օգտագործել տեղին և շատ դեպքերում նաև ոչ տեղին համատեքստերում, լինի դա հեռուստատեսային հաղորդում, առցանց լրատվամիջոց, յութուբյան կարճամետրաժ հոլովակներ, ֆեյսբուքյան գրառումներ և այլն: Եթե նկատել եք այդ նյութերը հիմնականում գայթակղիչ, և ինչու չէ, նաև սադրիչ վերնագրեր ունեն ու ստիպում են, որ օգտատերը հետաքրքրությունից և հնարավոր սենսացիոն լուր իմանալու ցանկությունից ելնելով ընթերցի կամ դիտի տեղադրված նյութը: Սակայն, շատ հաճախ ընթերցողի մոտ հիասթափություն է առաջանում, երբ նյութի վերնագիրն ու բովանդակությունը իրար չեն համապատասխանում:

Ատելության խոսքը կարող է արտահայտվել գրավոր, բանավոր կամ այլ ձևերով, օրինակ՝ պատկերներ, նշաններ, խորհրդանշաններ, նկարներ, երաժշտություն, բեմադրություններ կամ տեսանյութեր: Այն նաև ներառում է որոշակի վարքագծի օգտագործում, ինչպես օրինակ, ժեստեր՝ գաղափարը, ուղերձը կամ կարծիքը հաղորդելու համար:

Վերոգրյալի թվին են պատկանում նաև «ատելություն» բառը պարունակող վերնագրերն ու խորագրերը: Շատ դեպքերում, երևույթի գույներն ավելի խտացված և ազդեցիկ դարձնելու համար, մամուլում և սոցիալական տարբեր հարթակներում սկսել են օգտագործել «ատելության

խոսք», «ատելություն քարոզող», «ատելություն սերմանել» և նմանատիպ ճնշող արտահայտություններ, սակայն կարևոր է իմանալ, որ յուրաքանչյուր վիրավորանք չի կարող համարվել ատելության խոսք, ինչպես նաև միջանձնային հարաբերություններում ծագած վեճը, որը կարող է ավարտվել բռնությամբ, միշտ չէ, որ պետք է վերագրել ատելության հիմքով հանցագործության:

Ավելի պատկերավոր պատկերացնելու համար եկե՛ք ընթերցենք ստորև ներկայացված օրինակները:

Օրինակ՝ եթե երկու կամ ավելի անձանց միջև որևէ խնդիր կա, որը ծագել է պարզապես միջանձնային բախման և իրար սխալ հասկանալու հետևանքով, ապա դա կարելի է դիտարկել որպես վեճ, բայց եթե կողմերից մեկը կամ թեկուզ բոլոր կողմերը միմյանց հետ շփվում են կանխակալ, խտրական, նախապաշարմունքային մոտեցումների նախատրամադրվածությամբ, հիմնված կողմերի տեսակի և/կամ ծագման վրա (սեռ, ազգություն, կրոն, գենդերային պատկանելություն, ռասա և այլն), ապա դա կարող է դիտարկվել որպես ատելության խոսք և խտրական վերաբերմունք:

ԱՅՍՊԻՍՈՎ՝ Ատելության խոսքը կապված է արտահայտման տարբեր ձևերի հետ, որոնք ուղղված են անձի կամ անձանց խմբի դեմ՝ անձի կամ անձանց խմբի անհատական հատկանիշների կամ կարգավիճակի հիմքով, և ատելության խոսքի դեմ քայլերի ձեռնարկումն անպայմանորեն չի ենթադրում քրեական պատժամիջոցների կիրառում: Այդուհանդերձ, երբ ատելության խոսքը ստանում է վարքագծի այնպիսի ձև, որն ինքնին քրեական հանցագործություն է, օրինակ՝ թշնամանք, բռնություն քարոզելու կամ հրահրելու հրապարակային կոչերը:

Ավելի առարկայական օրինակներ՝

Վիրավորանք կամ կանխակալ վերաբերմունք

- «Դու հիմարություններ ես դուրս տալիս, որովհետև դասդ չես սովորել ու հիմա փորձում ես հորինել գոյություն չունեցող նյութը»:
- «Դուք սևամորթ եք և դա է պատճառը, որ արագ եք վազում»:

Խտրական, ատելության խոսք պարունակող վերաբերմունք

- «Դուք չեք կարող խելացի և կարևոր բան ասել, քանի որ կին եք, իսկ բոլոր կանայք անխելք են և դա անհերքելի փաստ է»:
- «Սևամորթ ես ու դա է պատճառը, որ կենդանու արագությամբ ես վազում»:

Վերջին օրինակներում տրված արտահայտություններն ավելի խտրական և վտանգավոր կարող են լինել, եթե արվել կամ հրապարակվել են որևէ հանրային մարդու կողմից, լինի նա դերասան, սոցիալական ցանցի հայտնի օգտատեր, քաղաքական գործիչ և այլն: Այս մարդիկ ունեն լսարան և հետևորդներ, ում համար հանրային և հայտնի մարդու կողմից հնչեցված նմանատիպ արտահայտությունները կարող են ընկալվել որպես «հանրային ճշմարտություն»: Նմանատիպ կարծիքի ազդեցությունն առավել նկատելի է հենց երիտասարդների շրջանում: Երիտասարդները երբեմն նմանակում կամ երկրպագում են այս կամ այն հայտնի անձին և անշուշտ, նրա գաղափարներն ու հնչեցրած մտքերը կարող են միանգամայն ճշմարտացի թվալ նրանց, ինչից ելնելով էլ տարածում են դրանք՝ արդեն իսկ հավատալով դրանց աներկբա:

Այստեղ կարևոր է հաշվի առնել հետևյալը՝ առցանց տիրույթը հանրային տարածք է, և օրինակներում ներկայացված կարծիքներն ու արտահայտությունները հրապարակային հայտարարություններ են:

ԹԵՄԱ 3
ԲՈՒԼԻՆԳ (ՍՏՈՐԱՑՈՒՑԻՉ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒՄ, ԾԱՂՐ)

Թեմայի ուսումնասիրության արդյունքում մասնակիցները պետք է ձեռք բերեն բուլինգի և կիբերբուլինգի մասին գիտելիքներ և ձևավորեն նման վարքագիծ չդրսևորելու համոզմունք:

Թեմայի նպատակն է, որպեսզի սովորողները՝
- ձեռք բերեն գիտելիքներ բուլինգի և կիբերբուլինգի, դրանց դրսևորման ձևերի և բացասական հետևանքների վերաբերյալ,
- ձևավորեն նման վարքագիծը ճանաչելու, բացահայտելու և կանխելու կարողություն, - ձևավորեն համոզմունք, որ բուլինգը և կիբերբուլինգը անթույլատրելի են:

ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բուլինգը (անգլ. «bully»՝ կռվարար, բռնարար) անձի նկատմամբ կիրառվող ագրեսիվ վարքն է՝ հետապնդում, հոգեբանական ճնշում և ահաբեկում, ծեծ, հեգնանք, ծաղրանք, բամբասանքների տարածում: Այն կարող է իրականացվել ցանկացած խմբում, առավել վտանգավոր է դպրոցականների շրջանում:

Բուլինգը կարող է դրսևորվել ինչպես իրական կյանքում, այնպես էլ՝ առցանց: Կիբերբուլինգը տեղի է ունենում սոցիալական ցանցերի, sms-ների, էլեկտրոնային փոստի կամ ցանկացած այլ առցանց հարթակների միջոցով:

Կան բուլինգի տարբեր տեսակներ.

- **Ֆիզիկական՝** հարվածել, թքել, հրմշտել, ուրիշի իրերին տիրանալ կամ ջարդել, միտումնավոր կամ կոպիտ շարժումներ կատարել, որոնք կարող են վնասել մարդու մարմինը կամ գույքը,
- **բանավոր՝** ծաղրել, սպառնալ, պիտակավորել, անհարկի սեռական բնույթի մեկնաբանություններ անել,
- **հոգեբանական կամ սոցիալական՝** դիտավորյալ խմբից վտարել, չընդունել, բամբասանքներ տարածել, վախեցնել, հանրայնորեն վարկաբեկել,
- **սեռական՝** սեռական բնույթի հպումներ, հարձակումներ, բռնի գործողություններ և այլն,
- **կիբերբուլինգ՝** կիբերնվաստացումներ կամ կիբերսադրանք՝ տեքստային հաղորդագրություններ, սպառնալիքներ, անպարկեշտ նկարներ, վիրավորական նյութեր ուղարկելը կամ տարածելը համացանցի կամ այլ տեխնոլոգիաների միջոցով:

Ըստ հետազոտությունների Հայաստանում երեխաների 38 %-ը տեսել է՝ ինչպես են համայնքում երեխային ծեծում, իսկ 35 %-ը նվազագույնը 1–5 անգամ դպրոցում ծաղրանքի (բուլինգի) ականատես է եղել[16]:

16 «Երեխայի կարծիքով…» հարցման արդյունքները, Save the Children, World Vision, ապրիլ-մայիս, Save the Children, World Vision, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան (2017) https://resourcecentre.savethechildren.net/pdf/yv_brief_version_final_arm.pdf/; Ա. Համբարձումյան (2021) «Բուլինգը երևանյան դպրոցական միջավայրում. սոցիոլոգիա-

Կիբերբուլինգ է համարվում, երբ երեխային սպառնում, հետապնդում, նվաստացնում, ամաչեցնում կամ այլ կերպ թիրախավորում է մեկ այլ երեխա՝ համացանցի, ինտերակտիվ և թվային տեխնոլոգիաների կամ բջջային հեռախոսների միջոցով: Կիբերբուլինգի դեպքում երկու կողմում էլ երեխաներ են: Այն իրականացվում է առնվազն մեկ այլ երեխայի կողմից: Այն դեպքում, երբ գործողության մեջ ներգրավվում է չափահաս անձ, դեպքն այլ կերպ է որակվում, օրինակ կիբեր հետապնդում: Տեխնոլոգիաների միջոցով մեծահասակների կողմից երեխաներին գայթակղելու փորձը կոչվում է սեռական շահագործում:

Կիբերբուլինգը կարող է ընդունել զանազան տեսակներ, դա կախված է երեխայի երևակայությունից: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ երեխաների դերը հաճախ կարող է փոփոխվել՝ բուլինգի ենթարկվող երեխան հեշտությամբ կարող է վերածվել ենթարկողի, և հակառակը[17]:

Հայտնի են դեպքեր, երբ երեխաները սպանություն կամ ինքնասպանություն են գործել կիբերբուլինգի հետևանքով[18]:

Կիբերբուլինգը կարող է սահմանվել որպես ագրեսիվ, դիտավորյալ գործողություն, որն իրականացվում է անհատի կամ խմբի կողմից՝ օգտագործելով հաղորդակցման էլեկտրոնային ձևեր իրեն պաշտպանել չկարողացող անձի դեմ: Այն սովորաբար իրականացվում է շարունակաբար և հաճախ բնութագրվում ուժերի անհավասարակշռությամբ[19]:

Կիբերբուլինգը կարող է ներառել բամբասանքների տարածում, կեղծ տեղեկությունների կամ վիրավորական հաղորդագրությունների, ամոթալի մեկնաբանությունների կամ լուսանկարների հրապարակում, կամ որևէ մեկին սոցիալական ցանցերից կամ այլ հաղորդակցության ձևերից վտարում: Բուլինգը, որի նախանշանները հաճախ ի հայտ են գալիս դպրոցում կամ այլ սոցիալական միջավայրում շփման ընթացքում, տեղափոխվելով առցանց միջավայր կարող է հատկապես խորը վնաս պատճառել, քանի որ ցանկացած պահի կարող է ազդել բուլինգի ենթարկվող երեխայի վրա և արագ հասնել առավել լայն լսարանի:

Կիբերբուլինգն առցանց բռնության լուրջ դրսևորում է և կարող է ասոցացվել ցանկացած տեսակի բռնության, ներառյալ՝ սեռական բռնության հետ: Կիբերբուլինգն իրականում կարող է ներառել սեռական բնույթի պատկերների և նկարների տեղադրում և տարածում (ստեղծել, կիսվել և փոխանցել սեռական բնույթի նյութեր, հաղորդագրություններ կամ նկարներ (սեքսթինգ), խթանել առցանց ահաբեկումն ու ոտնձգությունները (կիբերհետապնդում), այդ թվում՝ զոհից սեռական բնույթի բարեհաճություն ստանալու կամ զոհին սեռական բնույթի գործողություններ հարկադրելու նպատակով):

Բուլինգն անհատի դեմ ուղղված ուժի ցուցադրություն է, մինչդեռ ատելության խոսքը, սովորաբար, մարդկանց խմբերի դեմ ուղղված բռնության և թշնամանքի կոչերն են, թեև զոհի տեսանկյունից երկուսն էլ բռնության և նվաստացման ձևեր են: Ատելության խոսքի առցանց դրսևորումները և կիբերբուլինգն օգտագործում են նույն առցանց հարթակները: Դրանք հաճախ ուղղված են այն անհատների դեմ, ովքեր իրենց ծագման, որևէ տեսակի հաշմանդամության, էթնիկ պատկանելության կամ նմանատիպ այլ պատճառներով տարբերվող են համարվում: Երկու դեպքում էլ գործ ունենք վիրավորական և ճնշումների նպատակ հետապնդող հաղորդակցության հետ: Շատ դեպքերում, կիբերբուլինգը և ատելության խոսքը միասին են հանդես գալիս, և սա չափազանց վատ է անդրադառնում անհատների և խմբերի վրա: Միևնույն ժամանակ, ատելության խոսքի դեմ պայքարում երիտասարդների մոտ տոկունության զարգացումը կարող է օգնել նրանց տոկուն լինել նաև կիբերբուլինգի դեպքում:

կան հետազոտություն», Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան, Հանրային քաղաքականության ինստիտուտ (2021) https://erit.am/documents/pdf/1e81b93bf2d9f3223649de4a82ccfaa7.pdf

17 M. F. Wright, L. B. Schiamberg (2021), “Child and Adolescent Online Risk Exposure. An Ecological Perspective”, Elsevier (2021), p. 79

18 A. John et al (2018), “Self-Harm, Suicidal Behaviours, and Cyberbullying in Children and Young People: Systematic Review”, doi:10.2196/jmir.9044

19 ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի Երեխաների նկատմամբ բռնության հարցերով Հատուկ ներկայացուցչի տարեկան զեկույց, 2016թ., https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G16/000/90/PDF/G1600090.pdf?OpenElement

Համացանցային գրագիտությունը չափազանց կարևոր գիտելիք է, քանի որ այն օգնում է երիտասարդներին ըմբռնել համացանցում ծավալվող գործընթացները և պաշտպանել իրենց վիրավորանքներից կամ կարողանալ արձագանքել, երբ դրանց ականատեսն են դառնում:

Երեխաները պետք է տեղեկացված լինեն, որ ստորև թվարկվող վարքագծի տեսակները անընդունելի են և կարող են լինել անօրինական: Նույնիսկ մեկ, առանձին դրվագը կարող է դառնալ վիրավորանքի տևական արշավի սկիզբ կամ ավելի ծայրահեղ դրսևորումների նախանշան: Երեխաները պետք է կարողանան ճանաչել նախազգուշական նշանները և խոհեմությամբ արձագանքել այն վիրավորական դրսևորումներին, ինչպիսիք են՝

- սպառնալիքներ, սադրող, ռասայական կամ էթնիկ վիրավորանքներ ուղարկելը կամ վիրավորական մականուններով դիմելը,
- տուժողի համակարգիչը համակարգչային վիրուսով վարակելու փորձը, - փոստարկղը վիրավորական նամակներով հեղեղելը,
- անձի մասին՝ նրան կամ նրա հեղինակությանը վնասելու նպատակով կեղծ տեղեկություններ տեղադրելը կամ տարածելը,
- որևէ մեկին առանձնացնելը և բոլորին այդ մեկին վիրավորելու կամ ծաղրելու կոչ անելը,
- այլ մարդու անունից կեղծ կամ անհավատալի բաներ ասելը,
- որևէ մեկի նկարները, հատկապես ոչ այնքան պատեհ իրավիճակներում, տարածելը՝ առանց այդ մարդու թույլտվության,
- որևէ մեկի նամակները առանց իր թույլտվության տարածելը,
- մյուսներին ճնշելը, որպեսզի ինչ-որ մեկին համայնքից (վիրտուալ կամ ոչ վիրտուալ) դուրս հանեն,
- նույնասեռականներին ուղղված վիրավորանքներն ու հալածանքը, գենդերային բնույթ ունեցող վիրավորանքներ կամ խտրականության այլ ձևեր,
- որևէ մեկին հետևողականորեն վիրավորական, չարակամ կամ տհաճ հաղորդագրություններ ուղարկելը:

Կարևոր է հաշվի առնել, որ որոշ երեխաներ իրենց կարող են նույնականացնել որպես բուլինգի և՛ ենթարկող, և՛ ենթարկվող: Սա կարող է խանգարել թեմայի բաց քննարկմանը: Պետք է խուսափել այնպիսի իրավիճակներ ստեղծելուց, երբ երեխաները ստիպված են լինում կարծիք արտահայտել, ինչից ելնելով էլ իրենց ճնշված են զգում: Կարծիք չարտահայտելու համար որևէ մեկի նկատմամբ չպետք է դրսևորել բացասական վերաբերմունք: Հնարավոր է ժամանակի ընթացքում նրանք իրենց բավարար ապահով զգան այդ միջավայրում և կիսվեն իրենց կենսափորձով: Քննարկումների ժամանակ կարող եք անդրադառնալ ծայրահեղ երևակայական դեպքերի, որպեսզի երեխաները ստիպված չլինեն կիսվելու իրենց փորձառությամբ: Սակայն այս դեպքում ևս պետք է ցուցաբերել զգուշավորություն՝ երեխաների բացասական փորձի մասին չհիշեցնելու նպատակով: Շատ կարևոր է բոլոր դեպքերում քննարկել լուծումները, որպեսզի իրավիճակն անելանելի չթվա:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3.Ա

Վարժությունը կարող է կիրառվել ցանկացած խմբի երեխաների համար: Սակայն ուշադիր եղեք, քանի որ խմբում կարող են լինել սցենարում ներկայացված դեպքի փորձ ունեցող երեխաներ: Եթե հստակ գիտեք, որ խմբում կա նման փորձ ունեցող երեխա և դեպքը տեղի է ունեցել ոչ վաղ անցյալում, ապա մի՛ կիրառեք այդ սցենարը, քանի որ այն կարող է վնաս պատճառել այդ երեխային: Ամեն դեպքում հիշեք, որ երեխաների՝ թե՛ որպես բուլինգի ենթարկողի, և թե՛ որպես ենթարկվողի փորձառության մասին ձեր ունեցած տեղեկությունները սակավ են:

Նախապատրաստական աշխատանք

Վարժության համար անհրաժեշտ է տպել ստորև նկարագրված սցենարը:

Վարժության կատարում

Մասնակիցներին բաժանեք խմբերի, յուրաքանչյուր խմբում՝ 3-5 անձ: Նրանց տրամադրեք ստորև ներկայացված սցենարը: Ցանկալի է, որպեսզի յուրաքանչյուր երեխա ունենա սցենարի մեկական օրինակ:

Խնդրեք երեխաներին քննարկել սցենարն իրենց խմբում և պատասխանել հետևյալ հարցերին.

- Այս դեպքում ինչպե՞ս կարելի է բնութագրել յուրաքանչյուր դերակատարի վարքագիծը:
- Արդյո՞ք այստեղ առկա են կարծրատիպեր, ինչպիսի՞ կարծրատիպեր, ու՞մ նկատմամբ:
- Ինչպե՞ս պետք է վարվեր դերակատարներից յուրաքանչյուրը:

Խմբերում քննարկմանը տրամադրեք 20 րոպե:

Խմբերում քննարկումից հետո լսարանի հետ միասին լսեք խմբերի եզրահանգումները և քննարկեք սցենարը:

Սցենար

Դպրոցից տուն գնալու ճանապարհին Սամվելը, Արմենը և Տիգրանը տեսնում են, որ իրենց առջևից քայլում է Միշան: Միշան վերջերս է տեղափոխվել իրենց քաղաք և դասարան: Երեխաները դասարանում հաճախ ծաղրում են նրան, որովհետև նա խոսում է իր բարբառով:

Սամվելը և Արմենը արագացնում են քայլերը, որ հասնեն Միշային: Հետո սկսում են վիրավորական բաներ ասել նրան, քաշքշում են պայուսակը և ծաղրելով հարցնում, թե արդյոք իրենց գյուղում բոլորն են նրա նման հագնվում, և գուցե ավելի լավ կլիներ, որ նա վերադառնար իրենց գյուղ, եթե չգիտի ինչպես պետք է իրեն պահի քաղաքում:

Տիգրանը շատ է նեղվում ստեղծված իրավիճակից: Սամվելը և Արմենը անընդհատ նայում են նրան և խրախուսում, որ ինքն էլ միանա իրենց և սկսի ծաղրել Միշային: Ի վերջո, Տիգրանը, ըստ իրեն, մի սրամիտ կատակ է անում՝ ասելով, որ պետք է մնար գյուղում, այնտեղ գոնե կով կթել կսովորեր: Սամվելին և Արմենին դա շատ է զվարճացնում, բայց Տիգրանը տեսնում է, թե Միշան որքան է նեղվում և որքան է վախենում այդ երեք տղաներից:

Երբ Տիգրանը տուն է հասնում, նա իրեն շատ վատ է զգում: Նա շատ լավ գիտի, թե ինչ է ծաղրը, իսկ այն ինչ նա ասաց Միշային, շատ ավելի վիրավորական էր, քան իրեն երբևէ ասված որևէ բան:

Բայց, մյուս կողմից, հաճելի էր Սամվելի և Արմենի հետ միասին ինչ-որ բանի վրա ուրախանալը, նրանց ընկերությունն ամեն ինչ արժե: Տիգրանը միացնում է համակարգիչը, սոցիալական ցանցում «ընկերանում» Սամվելի և Արմենի հետ, իսկ հետո իր էջում տեղադրում «կով կթելու» մասին իր մեկնաբանությունը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3.Բ

Միասին դիտեք այս տեսանյութերը՝
Բուլինգ. մաս 1 https://www.youtube.com/watch?v=w8LPU-Yhoag&t=12s
Բուլինգ. մաս 2 https://www.youtube.com/watch?v=YNuu1Z5zgIs
Բուլինգ. մաս 3 https://www.youtube.com/watch?v=HINNXg_hW88

Քննարկեք, խնդրեք երեխաներին արտահայտել իրենց կարծիքը, թե հայտնվել են արդյոք երբևէ նկարագրված իրավիճակներում, ի՞նչ վնաս կարող են պատճառել այս իրավիճակները:

ԹԵՄԱ 4
ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում երեխաները պետք է ձեռք բերեն հիմնական պատկերացումներ՝ համացանցային և մեդիա գրագիտության կարևորության, ինչպես նաև դրանց փոխկապակցվածության վերաբերյալ:

Թեմայի նպատակն է, որպեսզի սովորողները՝
- կարողանան ըմբռնել, թե ինչպես է երիտասարդների վրա ազդում մեդիան և համացանցն ընդհանուր առմամբ,
- ինչպես է մեդիա տիրույթը փոխկապակցվում ատելության խոսքի հետ և դառնում վերջինիս «արտադրողը»,
- պատկերացում կազմեն կիրառվող բառերի նշանակության ու չերևացող հեռահար նպատակների մասին, որոնք կարող են ստեղծել վտանգավոր պատումներ:

ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալական մեդիա հարթակների հասանելիությունն ու այդ հարթակներին մասնակցայնությունը բոլորի համար նույնը չէ: Մեդիա հարթակների դիզայնը որոշում է մեր փոխհարաբերությունները՝ առաջին հերթին ընտրելով և առաջնահերթություն տալով տրամադրվող տեղեկություններին: Հարթակները զտում են հաղորդագրությունները, որոնք ստանում ենք հիմնվելով մեր նախորդ պատմության և «հավանումների» վրա: Կարևոր հմտություն է՝ տեղյակ լինել զտման այս գործընթացի մասին և նախապես սահմանել մարդու տեղեկատվական կարիքները և ռազմավարությունը՝ տարբեր աղբյուրներից տեղեկություններ ստանալու համար:

Տեղեկատվության վերլուծություն

Քննադատական վերլուծության հմտություններն անհրաժեշտ են բազմաթիվ արտադրողներից ստացվող հաղորդագրությունները մեկնաբանելու համար, օրինակ՝ անհատներ, ոչ ֆորմալ խմբեր, կազմակերպված խմբեր և ավանդական լրատվամիջոցներ: Անհատ լրաբերների դրդապատճառների վերլուծությունն ավելի բարդ է, քանի որ դրանք հաճախ անանուն են: Բացի այդ, անհրաժեշտ է վերլուծել տարբեր դերակատարների միջև փոխանակումները և խոսակցությունները, քանի որ հաճախ դրանք ոչ թե տարածվող մեկ առանձին հակիրճ հոդված կամ տեսանյութ է, այլ իրար հետ փոխկապակցված հաղորդագրությունների մի ամբողջ շարք:

Մեզ մոտ ծագող հարցերից առաջինն այն է, թե ի՞նչ նպատակով է գրել հեղինակն այս նյութը, ի՞նչ է ուզում, որ ես մտածեմ կամ կատարեմ:

Սոցիալական մեդիայի հետ կապված համացանցային գրագիտությունը նշանակում է ոչ միայն հասկանալ առցանց հարթակներում տարածվող բովանդակությունը, այլ հասկանալ նաև հարթակների բնույթը և դրանց ձևավորման ներսում թաքնված գաղափարները:

Սոցիալական մեդիա հարթակների ձևավորման և հակասությունների վերլուծություն

Ատելության խոսքին արձագանքելու եղանակներից մեկը՝ սոցիալական մեդիա հարթակներում ատելության խոսքի դրսևորումներ հայտնաբերելուց հետո, սոցիալական մեդիա հարթակներին այդ մասին անմիջապես հաղորդելն է: Գործընթացն արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է հասկանալ, թե ինչն է համարվում անհամապատասխան վարք գործող հարթակի կանոնակարգում, այսինքն՝ վերլուծել «օգտագործման կանոնները և պայմանները» և «համայնքային ուղեցույցները»:

Սոցիալական մեդիան ունի հատուկ կանոնների շարք՝ կիբերհարձակման, մանկական պոռնոգրաֆիայի կամ մահվան սպառնալիքների դեպքերի համար, որոնք հաճախ, կարող են հանգեցնել ատելության հիմքով հանցագործությունների: Այս դեպքերի համար լավագույն գործողությունն այն է, որ օգտագործվեն սոցիալական մեդիայի, և հատկապես՝ ազգային մակարդակով արդարադատության և ոստիկանության համակարգերի կողմից առաջարկվող հաղորդման մեխանիզմները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4

Վարժությունը կարող է կիրառվել յուրաքանչյուր խմբի երեխաների համար, թեև անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների տարիքը, հաղորդակցման և այլ անհրաժեշտություններն ու կարիքները:

Նախապատրաստական աշխատանքներ

Վարժության համար անհրաժեշտ է որոնել և գտնել վերջին շրջանում հրապարակված որևէ նյութ, կամ հատված գեղարվեստական գրականությունից, որի բովանդակությունը հետաքրքիր կլինի երեխաների համար: Ուշադիր եղեք, որպեսզի նյութը չպարունակի կեղծ տեղեկություն, քանի որ այդ տեղեկությունը կարող է տպավորվել երեխաների մոտ: Այնուամենայնիվ, եթե նյութը պարունակում է կեղծ, ատելություն պարունակող, խտրական տեղեկություն հավաստիացեք, որ յուրաքանչյուր մասնակից հասկացել է, որ այն կեղծ է, խտրական և ատելություն պարունակող: Նյութն ընտրելուց առաջ հաշվի առեք լսարանի առանձնահատկությունները՝ տարիքը, սոցիալական պատկանելությունը և մյուս կարևոր հատկանիշները:

Նախապես տպեք նյութի օրինակներ՝ մասնակիցների թվին համապատասխան:

Վարժության կատարում

Մասնակիցներին բաժանեք խմբերի, յուրաքանչյուրում՝ 3-5 անձ: Նրանց տրամադրեք նյութը: Ցանկալի է, որ յուրաքանչյուր երեխա ունենա նյութի մեկական օրինակ:

Երեխաներին խնդրեք վերլուծել նյութը և պատասխանել հետևյալ հարցերին՝

- ո՞վ է նյութի հեղինակը,
- ի՞նչ քաղաքական հայացքներ կամ դիրքորոշում ունի նա,
- ի՞նչ դեր ունի հանրության շրջանում,
- ինչու՞ է նյութը հրապարակել հենց այդ ժամակահատվածում և տվյալ սոցիալական մեդիայում և ոչ մեկ այլ հարթակում,
- ո՞րն է նրա թիրախային լսարանը,
- ո՞րն է նրա գրառումների հիմնական հաղորդագրությունն ու ուղերձը:

Վարժության կատարման համար հատկացրեք 15-30 րոպե՝ ելնելով նյութի ծավալից և խմբի մեծությունից:

Վարժությունն ավարտելուց հետո յուրաքանչյուր խմբին խնդրեք ներկայացնել նյութը և նյութի վերաբերյալ այն տեղեկությունը, որը կարողացել են պարզել ըստ վերը նշված հարցադրումների:

ԹԵՄԱ 5
ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ՝ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ[20]

Թեմայի ուսումնասիրության արդյունքում երեխաները պետք է ձեռք բերեն հիմնական պատկերացումներ պատմության և պատումի վերաբերյալ:

Թեմայի նպատակն է, որպեսզի սովորողները՝
- ըմբռնեն, թե ինչ է այլընտրանքային պատումը,
- կարողանան վերափոխել ատելության խոսքի պատումը, ստեղծելով նոր՝ այլընտրանքային կառուցողական պատում:

ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պատում, թե՞ պատմություն

Պատումի գաղափարն ունի տարբեր իմաստներ և գոյություն չունի մեկ կոնկրետ սահմանում: Օրինակ, որոշ մարդիկ «պատմություն»-ը և «պատում»-ն օգտագործում են որպես հոմանիշներ, սակայն դրանց միջև կա տարբերություն: Ինչպես ասել է ռուս գրող Նաբոկովը՝ «Եթե ես ձեզ պատմեմ, որ մահացել է թագավորը, այնուհետև թագուհին, դա պատում չէ, այլև սյուժե: Բայց եթե ես ձեզ պատմեմ, որ մահացել է թագավորը, իսկ այնուհետև չդիմանալով ցավին մահացել է նաև թագուհին, դա պատում է»:

Պատումները պատմության ավելի ֆորմալ կամ գրական ժանրերը՝ վեպերը կամ արձակ ստեղծագործությունները վկայակոչելու համար են: Պատմել նշանակում է վկայություն տալ իրադարձությունների կամ փորձի մասին, լինի դա ճշմարիտ, թե գեղարվեստական:

Պատումը լեզվի կազմակերպումն է որոշակի կառույցի մեջ, որով այն ձեռք է բերում իրադարձությունների մասին կապակցված և կարգավորված ձևով տեղեկացնելու հատկություն:

Այն ենթադրում է հաջորդականություն, որովհետև երբ պատում կա՝ մենք գիտենք. սկզբում պատահում է այս բանը, այնուհետև պատահում է մի ուրիշ բան, հետո՝ երրորդը և այն:

Այն ենթադրում է նաև որոշ փոխհարաբերություններ տարբեր բաների միջև. ինչպե՞ս են շարադրվում տեղի ունեցած իրադարձությունները, ի՞նչ տեսանկյունից են շարադրվում, ո՞վ է պատմողը, ի՞նչ փոխհարաբերություն է հաստատվում ասողի և լսարանի միջև և այլն:

Պատումները վերարտադրում են նախապաշարմունքը և կարծրատիպերը: Հաճախ մենք ենթադրում և հավատում ենք, որ պատմությունները ճիշտ են, հատկապես, եթե դրանք թվում են վստահելի և փոխանցվում այն մարդկանցից, ում հավատում ենք, կամ ում վստահված են իշխանության քաղաքական, սոցիալական, տնտեսական կամ մշակութային ոլորտները: Շատ

20 Թարգմանությունը՝ WE CAN ձեռնարկից՝ Գլուխ 4, էջ 59 և Գլուխ 5, էջ 77: https://rm.coe.int/wecan-eng-final-23052017-web/168071ba08

մարդիկ թվում է, թե ծանոթ են մեկին, ով գիտի մեկին, ով հանդիպել է մեկ ուրիշին և այդպես ստեղծվում է թվացյալ ճշմարիտ պատմություն:

Նախապաշարմունքները շատ դժվար է փոխել: Նախապաշարմունքների ուժը սովորաբար դիմադրում է իրականության փորձությանը, ինչպես օրինակ՝ անհամար դավադրության տեսություններով: Լուսնի վրա մարդու ներկայությունը ժխտողների համար կարող են կեղծված լինել Նիլ Արմսթրոնգի լուսանկարները լուսնի վրա քայլելիս, քանի որ չկա նկարող անձի լուսանկարը: Մինչդեռ, նախապաշարմունքի դեմ չի կարելի պայքարել նախապաշարմունքով, այն անհրաժեշտ է հակադրել կամ հավասարակշռել փաստերով և ռազմավարություններով, որոնք հրավիրում և դրդում են մարդկանց տեսնելու միևնույն իրականության տարբեր երեսները՝ դրանք այլ կերպ մեկնաբանելու հույսով:

Պատումները ձևավորում են մեր մտածողությունը և աշխարհընկալումը: Դրանք, ակնհայտորեն շրջանառվում և տարածվում են նաև առցանց: Առհասարակ, պատումները նոր կյանք են ստանում առցանց, քանի որ մեկնաբանությունները կարող են կատարվել անանուն և անպատժելիության ենթադրության ներքո: Դրանք ազդեցիկ են բազմաթիվ հարթակներում և առցանց տիրույթում իրենց տարածման արագության պատճառով: Նմանատիպ երևույթները վտանգավոր են, քանի որ միտված են բացասականն ու ապակառուցողականը ներկայացնել որպես սոցիալապես ընդունելի «նորմալ երևույթ», օրինակ՝ կատակների կամ տեսանյութերի տեսքով, որոնք տարածվում են առցանց շփվելիս: Երիտասարդները հեշտությամբ են ընկնում հասակակիցների ճնշումների և ազդեցության տակ, իսկ առցանց հաղորդակցության գործիքներին շատ դեպքերում վստահում են աներկբա: Այս ամենի ազդեցությունն ուժեղանում է, եթե նրանք զուրկ են մեդիա գրագիտությունից և համացանցն ապահով ու պատասխանատու օգտագործելու համապատասխան գիտելիքներից: Փորձը ցույց է տալիս, որ առցանց պատումները կարող են հավաստի թվալ և ամեն դեպքում, ազդել երիտասարդների աշխարհընկալման վրա, նույնիսկ եթե դրանք չափազանցված կամ արհեստական են թվում:

Պատումներն օգտագործվում են նաև բռնության դրդելու և դա արդարացնելու համար: Ծայրահեղական քարոզչությունն օգտագործում է պատումներ, որոնք հիմնվում են բռնության և բացառիկության գաղափարախոսությունների վրա՝ ներկայացնելով աշխարհի բևեռացվածության մասին պատկերացումները («նրանք» ընդդեմ «մեզ») և աշխատելով վախի, զայրույթի և վիրավորանքի զգացմունքների հետ: Ծայրահեղականները օգտագործում են անհատականացված մոտեցումներ, որոնք հաշվի են առնում երիտասարդների կարիքները և զգացմունքները: Առցանց հաղորդակցությունն անմիջական և ընկերական զգալու մի միջավայր է երիտասարդների համար, որտեղ ստեղծելով պատկանելության զգացում երիտասարդին թվում է, թե ինքը «մի մեծ և հերոսական երևույթի մաս» է կազմում: Հետազոտությունները ցույց են տալիս, որ բացասական կարծրատիպերը և ծայրահեղական պատումները մեծապես նպաստում են բռնությունն ընդունելի դարձնելու համար: Բռնի պահելաձևը չի կարող բացատրվել միայն ատելությամբ լի պատումով, սակայն այն կարևոր գործոն է:

Օրինակ, եթե վերլուծենք վերջին տարիներին ներգաղթյալների նկատմամբ բացասական վերաբերմունքն ամբողջ Եվրոպայում, այդ թվում Հայաստանում և մեր տարածաշրջանի այլ երկրներում, կտեսնենք, որ այդ պատումները ստեղծվել են քողարկելու այլ, իրական խնդիրները:

Շատ երկրներում քաղաքական գործիչները մեղադրում են ներգաղթյալներին անվանելով նրանց անբաններ և երկրի սոցիալական փաթեթներից «ձրիակերի» նման օգտվողներ: Ոմանք այս օրինակները կհամարեն «իրականության» վրա հիմնված մոտեցումներ, սակայն ուշադրություն դարձրեք այն կոչերին որոնք տեսակավորում են երևույթը և բոլորին դիտարկում մի կողմից: Ամենավտանգավորը սկսվում է, երբ հասարակության մեջ ստեղծվում են բևեռացումներ և մարդկանց սկսում են տարբերակել նոր տերմինների միջոցով: Առաջ են գալիս նոր ընկալումներ ինչպիսիք են՝ «մենք»-ը և «նրանք»-ը:

Որոշ ժամանակ անց պարզ դարձավ, որ այդ երկրներում պատրաստ չէին դիմակայել նոր մարտահրավերների և որպեսզի փորձեին քողարկել իրենց իսկ քաղաքական ձախողումները, քաղաքական գործիչները սկսեցին հանրության ուշադրությունը սևեռել այլ «խնդիրների վրա» որոնք հնարավորություն կտային «մենք»-ին իրենց զայրույթն ու ատելությունը կապել օտարների՝ «նրանց» հետ:

Հակադիր և այլընտրանքային պատումները նպատակ ունեն թիրախավորել տարբեր լսարաններ՝ կախված համատեքստից: Հակադիր պատումը նպատակ ունի հասնելու.

ա) նրանց, ովքեր հնարավոր է կամ արդեն համախոհ են ծայրահեղական հայացքներին՝ կանխելով նրանց հետագա ներգրավումը,

բ) նրանց, ովքեր արդեն ունեն ծայրահեղական տեսակետներ՝ աջակցելով անհատներին փոխելու իրենց տեսակետներն ու պահելաձևը:

Հակադիր պատումներն ամրապնդում են դրական, ներառական և կառուցողական գաղափարները և նպատակ ունեն հասնել ամբողջ բնակչությանը, ներառյալ՝ ատելության խոսք «արտադրողներին», ովքեր կունենան, ընդհանուր առմամբ, նոր պատմությանը ծանոթանալու հնարավորություն:

Տարբեր խմբերի համար տարբեր արձագանքներ են անհրաժեշտ:

Երբ հարցնում են, թե ինչպես արձագանքել հալածանքի պատումներին, ոմանք խորհուրդ են տալիս ուղղակի չպատասխանել: Պատմությանը «չարձագանքելը» նշանակում է ընդունել թաքնվածը և ամրացնել հալածանքի պատում պարունակող պատմության շրջանակը: Այսպիսով, ո՞րն է լավագույն ռազմավարությունը հալածանքի պատումը հեղինակազրկելու համար:

Կարող է անիմաստ հնչել, սակայն պատմությանը հակադարձելու համար անհրաժեշտ է այլ պատմություն, վիճարկող պատմություն կամ հակադիր պատում և, ընդհանուր առմամբ, նոր պատմություն, իրականությունը մեկնաբանելու նոր շրջանակ:

Հակադիր և այլընտրանքային պատումները պայքարում են ատելության խոսքի դեմ՝ հեղինակազրկելով կամ քանդելով ճնշող պատումները, որոնք արդարացնում են այն և դրանցով առաջ քաշում աշխարհայացքները՝ հիմնված մարդու իրավունքների արժեքների վրա,ինչպիսիք են՝ անկեղծությունը, հարգանքը տարբերվողների նկատմամբ, ազատությունը և հավասարությունը: Նրանք դա անում են տարբեր եղանակներով: Ոմանք ներկայացնում են փաստեր այլընտրանքային կամ վստահելի աղբյուրներից, որոնք կասկածի տակ են դնում բացասական թյուրըմբռնումներն ու պատումները: Ինչևէ, հետազոտությունները և փորձը ցույց են տվել, որ միայն շատ տեղեկություններ կամ փաստեր տրամադրելը հաճախ այդքան էլ արդյունավետ չէ: Պատումները կարիք ունեն կապելու մարդկանց պատկերացումները և իրենց կյանքի յուրահատուկ համատեքստերը՝ ստեղծելով նոր իմաստներ և կապել դրանք իրենց հույզերի ու կարիքների հետ: Հաճախ սա կարելի է անել հումորի և երգիծանքի միջոցով՝ արթնացնելով մարդկանց հուզական կապերն առարկայի հետ՝ հեշտացնելով ուղղակի շփման և անձնական հաղորդակցման համար տարածքը տարբեր հայացքներով մարդկանց միջև:

Փորձեք երեխաների հետ խոսել այս թեմաներով և բացատրել, որ երբեմն իրադարձությունների մեջ չենք կարող առաջին հայացքից տեսնել այն իրական թաքնված ուղերձը, որի համար ստեղծվում է պատումը:

Երբեմն ամբողջ նյութը կարող է լինել մի պատմության նկարագրություն, սակայն իրականում այն հաղորդագրությունը, որը մենք ստանում ենք, կարող է լինել թաքնված, առաջին հայացքից չերևացող: Երբ այդ նույն կոդ-բառերով հաճախակի խոսում են հանրության հետ, ակամայից որոշ մարդկանց մոտ ձևավորվում է կարծիք՝ անգամ եթե երևույթն անընդունելի է, ոմանց համար ժամանակի ընթացքում այն կարող է դառնալ թույլատրելի և սովորական:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5

Վարժությունը կարող է կիրառվել յուրաքանչյուր խմբի երեխաների համար, թեև անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների տարիքը, հաղորդակցման անհրաժեշտություններն ու կարիքները:

Նախապատրաստական աշխատանքներ՝

Վարժության համար անհրաժեշտ է որոնել և գտնել վերջին շրջանում հրապարակված որևէ նյութ, որտեղ ենթադրաբար կիրառվել է խտրական վերաբերմունք, կամ հատված գեղարվեստական գրականությունից: Նախապես տպեք նյութը՝ մասնակիցների քանակին համապատասխան: Նյութն ընտրելուց առաջ հաշվի առեք լսարանի առանձնահատկությունները՝ տարիքը, սոցիալական պատկանելությունը և մյուս կարևոր հատկանիշները:

Ըստ էության այս վարժությունը թիվ 4 վարժության տրամաբանական շարունակությունն է: Դուք կարող եք ընտրել նոր նյութ, կամ շարունակել աշխատել նույն նյութի վրա:

Վարժության կատարում՝

Մասնակիցներին բաժանեք խմբերի, յուրաքանչյուրում՝ 3-5 անձ և տրամադրեք նրանց նյութը: Ցանկալի է, որպեսզի յուրաքանչյուր երեխա ունենա նյութի մեկական օրինակ:

Երեխաներին խնդրեք վերլուծել նյութը և պատասխանել հետևյալ հարցերին՝
- ո՞վ է նյութի հեղինակը,
- ի՞նչ քաղաքական հայացքներ կամ դիրքորոշում ունի նա,
- ի՞նչ դեր ունի հանրության շրջանում,
- ինչու՞ է այդ նյութը հրապարակել հենց այդ ժամակահատվածում և տվյալ սոցիալական մեդիայում և ոչ մեկ այլ հարթակում,
- ո՞րն է նրա թիրախային լսարանը,
- ո՞րն է նրա գրառումների հիմնական հաղորդագրությունն ու ուղերձը:

Այնուհետև, քննարկվող թեմայի վերաբերյալ խնդրեք ստեղծել ոչ թե ընդհանրացումների և նախապաշարմունքների, այլ փաստարկված օրինակների վրա հիմնված այլընտրանքային պատում:

Օրինակ, եթե վերլուծվող օրինակն այն է, թե բոլոր ներգաղթյալներն անբան են և ոչ մի օգուտ չեն տալիս այն երկրին, որտեղ բնակություն են հաստատել, կարող եք բերել Շառլ Ազնավուրի օրինակը, ասելով, որ նա նույնպես ներգաղթյալների ընտանիքից էր: Այստեղ կարող եք հիշեցնել մեծանուն երգչի հոգեհանգստի ժամանակ Ֆրանսիայի նախագահ Էմմանուել Մակրոնի հնչեցրած հետևյալ խոսքերը, որը նա տեղադրեց նաև իր թվիթերյան էջում:

Որոշ ժամանակ այս դրական այլընտրանքային պատումն օգտագործվում էր

«Ո՛չ ատելության խոսքին» համաեվրոպական երիտասարդական շարժման դասընթացների ժամանակ՝ որպես լավագույն այլընրանքային պատում, որն ապացուցում է, որ երկրի հպարտությունը կարող է լինել մեկ այլ երկրի ներկայացուցիչը, ով ժամանակին ներգաղթյալ է եղել:

Առաջարկեք երեխաներին գտնել նմանատիպ օրինակներ բժիշկների, ոստիկանների, հայտնի գիտնականների, դերասանների, նկարիչների և աշխարհում կարևոր փոփոխություններ իրականացրած այլ անձանց ծագման վերաբերյալ, ում նկատմամբ երեխաները կարող են ունենալ նախապաշարմունքային վերաբերմունք խտրականության ենթարկվելու որևէ հիմքով:

ԹԵՄԱ 6
Ի՞ՆՉ ԱՆԵԼ

ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՕԳՏԱԿԱՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ[21]

> «Մենք բոլորս ենք ծնվում ագրեսիայի և կարեկցանքի կարողությամբ: Թե ո՞ր միտումներն ենք ընտրում, կախված է անհատների, ընտանիքների, համայնքների և առհասարակ մեր մշակույթի խոհեմ ընտրությունից: Ատելության հաղթահարման բանալին կրթությունն է՝ տանը, դպրոցում և համայնքում»:
>
> Հոգեբան Բեռնար Գոլդեն

Ի՞նչ կարող եք անել, երբ բախվել եք ատելությամբ լի որևէ հաղորդագրության: Ո՞ր ռազմավարությունը կաշխատի, և որը՝ ոչ:

Ինչպե՞ս արձագանքել:

Ծանոթացեք ստորև ներկայացված մի շարք օգտակար քայլերի, որոնց պետք է հետևել:

- Կեցվածք ընդունեք և բացատրեք, որ համաձայն չեք: Ցույց տվեք, որ կան մարդիկ, ովքեր չեն հանդուրժի նման հայտարարություններ: Լռելը կարող է նշանակել, թե դուք համաձայն եք դրանց հետ, ուստի ատելությունը կշարունակի տարածվել … Հատկապես եթե դուք ճանաչում եք ատելության խոսք գործածած անձին, ապա միշտ էլ կարող եք հարցնել, թե ինչու է ինչ-որ մեկը նման բաներ ասում: Հարցեր տալը ստիպում է մարդուն մտածել իր հայտարարությունների մասին:

21 Ըստ «Խոսելիս խաղաղություն սերմանեք: Ատելության խոսքն ընդունելի տարբերակ չէ» բրոշյուրի (2020), Եվրոպայի խորհուրդ՝ https://rm.coe.int/speak-peace-armenian-screen/pdf/1680a1eacb

- Կիրառեք չվիրավորող լեզու, երբ արձագանքում եք, և մի՛ պատասխանեք այն նույն ձևով ու տոնայնությամբ, ինչպիսին սկզբնական ատելություն սերմանող հաղորդագրությունն է: Որքան էլ որ շատ եք ուզում, երբեք վրեժխնդիր մի՛ եղեք կամ մի արձագանքեք անպատշաճ կերպով, նույնիսկ, երբ իրավիճակը հատկապես ցավոտ է: Թիրախավորեք ոչ թե հեղինակին, այլ ավելի շուտ հայտարարության բովանդակությունը:
- Կարեկցանք դրսևորեք ատելության խոսքի թիրախում հայտնվածների նկատմամբ: Ցույց տվեք, որ կարծում եք, որ ատելության խոսքը կոպիտ է ու վիրավորական: Բացի տուժողին աջակցելուց ձեր ուղերձը կարող է նրանց խրախուսել՝ գիտակցել, որ իրենք չպետք է ընդունեն ատելությունն ու այդ մասին պետք է հաղորդեն պատկան մարմիններին:
- Ճշտե՛ք կեղծ տեղեկությունները: Այն դեպքերում, երբ ունեք հնարավորություն ներկայացնելու ճշգրիտ տեղեկություն, արեք դա և ապացուցեք պնդումների կեղծ լինելը փաստերի միջոցով: Դա կարող է չհամոզել ատելությամբ լցվածին, բայց դուք կարող եք համոզել այլ ունկնդիրների կամ ընթերցողների:
- Հեռացրե՛ք, եթե անհրաժեշտ է: Անկախ նրանից, թե նախընտրում եք ուղղակիորեն արձագանքել, թե՝ ոչ, դուք միշտ էլ կարող եք հաղորդել ատելություն սերմանող առցանց բովանդակության հրապարակման վերաբերյալ, կամ հեռացնել նյութը, հատկապես ձեր սեփական պատից կամ էջից: Հաղորդեք դրա մասին առցանց հարթակին (սոցիալական մեդիա, ֆորումներ): Եթե նրանք չիմանան այդ մասին, ոչինչ չեն կարող անել դրա հետ կապված: Խուսափե՛ք այն վերահրապարակելուց, քանի որ դրանով դուք միայն ավելի կտարածեք և լայնորեն տեսանելի կդարձնեք ատելություն պարունակող հաղորդագրությունը:
- Մի՛ հայտնվեք կամ ներգրավվեք անվերջ քննարկումներում: Արտահայտեք ձեր անվստահությունն ու դժգոհությունը և հավատարիմ մնացեք հանգիստ ձևակերպումներին՝ հակիրճ, բայց հզոր:
- Սովորեք և խոսեք բազմազանության, հավասարության, ներառվածության մասին: Որքան ավելի շատ մարդիկ կրթվեն և իրազեկվեն այս խնդիրների շուրջ, այնքան ավելի շատ կկարողանանք կանխարգելել ատելության խոսքը:
- Կամավորագրվե՛ք մարդու իրավունքների պաշտպանությանը և նախաձեռնող եղեք: Միացե՛ք առցանց համայնքներին կամ կազմակերպություններին, որոնք խթանում են մարդու իրավունքները: Ստուգեք, թե արդյոք ձեր համայնքում կան կազմակերպություններ, որոնք աշխատում են, հանուն ներառման, ժողովրդավարական արժեքների և խաղաղության, կամ պայքարում են ռասիզմի, սեքսիզմի ու խտրականության դեմ, և միացե՛ք նրանց ջանքերին:
- Ատելության խոսքի մասին հաղորդեք պատկան մարմիններին, քննարկեք իրավաբանների հետ: Եթե վերոնշյալ քայլերից ոչ մեկն օգտակար չէ, և դուք վտանգ եք զգում ձեր անվտանգության ու կյանքի հետ կապված, հաղորդեք ատելության խոսքի վերաբերյալ պատկան մարմիններին:

Անկախ նրանից, դուք եք հանդիսանում ատելության խոսքի և (կամ) բուլինգի թիրախը, թե ականատես եք եղել նման իրավիճակի դիմե՛ք ձեր ծնողներին, դիմե՛ք ձեր ծնողներին, ձեր ուսուցիչներին կամ ձեր դպրոցի տնօրինությանը, եթե ապահով եք զգում և ատելության խոսքը չի դրսևորվել այն անձի կողմից, ում դիմելու եք:

Բոլոր դեպքերում դուք կարող եք դիմել Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանին:

Դիմելու համար կարող զանգահարել 116 հեռախոսահամարով: Հեռախոսազանգն անվճար է: Մարդու իրավունքների պաշտպանին կարող եք դիմել նաև առցանց, ներկայացնելով դիմումբողոք children@ombuds.am և ombuds@ombuds.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Երեխաների իրավունքների մասին մանրամասն կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ http://children.ombuds.am/

Դուք կարող եք դիմել նաև Հայաստանում գործող Երեխաների պաշտպանության ցանցին: Զանգահարել նրանց հետևյալ հեռախոսահամարներով՝ +374 60 540150 («Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի թեժ գիծ), կամ գրել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ epcanc@gmail.com Ցանցի Ֆեյսբուքյան էջն է՝ https://www.facebook.com/CPN.Armenia/

Կարևոր է

Երբեք, մի՛ կորցրեք հույսը:
Կարող է թվալ, թե ատելության արմատները խորն են և ուժեղ, և որքան էլ ջանք գործադրեք, ատելության խոսքի ռիսկն առկա է: Կարևորը գործելն է և միանալը բոլոր նրանց, ովքեր աշխատում են միևնույն խնդրի լուծման ուղղությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Պ. Բլենդեր և այլոք (2003), «Կողմնացույց. Մարդու իրավունքների կրթության երիտասարդական ձեռնարկ», Եվրոպայի Խորհուրդ, թարգ.՝ «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» ՀԿ (2006) https://armedia.am/static/books/pdf/5_arm.pdf
- Մ. Է. Բլեդերոդ-Սանթոս և այլոք (2008), «Կոմնացույցիկ. Մարդու իրավունքների կրթության մանկական ձեռնարկ», Եվրոպայի Խորհուրդ, թարգ.՝ «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» ՀԿ (2012) http://www.acrpc.am/downloads/compasito.pdf
- Է. Քին, Մ. Ջորջեսկու, Ռ. Գոմես, «Էջանիշեր. Մարդու իրավունքների կրթության միջոցով ատելության խոսքի առցանց դրսևորումների դեմ պայքարի ձեռնարկ», Եվրոպայի Խորհուրդ, վերանայված հրատարակություն (2020) https://rm.coe.int/bookmarks-ar-9-web/1680a52786
- A. de Latour et al. (2017), WE CAN! Taking Action against Hate Speech through Counter and Alternative Narratives. Council of Europe. https://rm.coe.int/wecan-eng-final-23052017-web/168071ba08
- Dr. Titley et al (2014), Starting Points in Combating Hate Speech Online. Council of Europe. https://rm.coe.int/1680665ba7
- «Խոսելիս խաղաղություն սերմանեք. Ատելության խոսքն ընդունելի տարբերակ չէ», Եվորպայի խորհուրդ (2020) https://rm.coe.int/speak-peace-armenian-screen/pdf/1680a1eacb
- No Hate Speech Movement Campaign Glossary – Council of Europe www.nohatespeechmovement.org/hate-speech-watch/ glossary
- Child Rights Education Toolkit:Rooting Child Rights in Early Childhood Education, Primary and Secondary Schools. First Edition, UNICEF (2014), Geneva. https://www.unicef.org/media/63081/file/UNICEF-Child-Rights-Education-Toolkit.pdf
- J. Mayers (2002) and C. Hanbury (2011), Training for Child Protection. Toolkit. Keeping Children Safe Coalition (2011) https://resourcecentre.savethechildren.net/pdf/kcstool3_-_english.pdf
- R. Gollob and P. Krapf (2007), Exploring Children's Rights. Nine short projects for primary level. Council of Europe (2007) https://www.coe.int/t/dg4/education/ibp/source/Exploring_childrens_rights_en.pdf
- Բ. Բարդիք և այլոք (2007), Համացանցային գրագիտության ձեռնարկ - Internet Literacy Handbook. Եվրոպայի խորհուրդ (2007) https://www.coe.int/t/dghl/StandardSeting/InternetLiteracy/InternetLiteracyHandbook_3_AM.asp
- Dr E. Milovidov (2020) Parenting in the Digital Age. Positive parenting strategies for different scenarios. Council of Europe (2020) https://rm.coe.int/publication-parenting-in-the-digital-age-2020-eng/1680a0855a
- Ամենօրյա դաս. Վերջ բռնությանը դպրոցներում, Զեկույց. UNICEF (2018) https://www.unicef.org/armenia/մամուլի-հաղորդագրություն/աշխարհում-դեռահասների-կեսը-դպրոցում-կամ-դպրոցի-տարածքում-ենթարկվում-է https://www.unicef.org/media/73516/file/An-Everyday-Lesson-ENDviolence-in-Schools-2018.pdf.pdf
- «Երեխայի կարծիքով...» հարցման արդյունքները, Save the Children, World Vision, ապրիլ-մայիս, Save the Children, World Vision, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան (2017) https://resourcecentre.savethechildren.net/pdf/yv_brief_version_final_arm.pdf/
- Ա. Համբարձումյան (2021) «Բուլինգը երևանյան դպրոցական միջավայրում. սոցիոլոգիական հետազոտություն», Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան, Հանրային քաղաքականության ինստիտուտ (2021) https://erit.am/documents/pdf/1e81b93bf2d9f3223649de4a82ccfaa7.pdf
- Ա. Ղազարյան (2019) «Խտրականությունը, ատելության հանցագործությունները և ատելության խոսքը Հայաստանում. տվյալների հավաքագրում: Իրավիճակի վերլուծության զեկույց», Եվրոպայի խորհուրդ (2019) https://rm.coe.int/situational-analysis-armenia-hye/16809e49f2
- H. Eggebø and E. Stubberud (2016) Hate speech, report 2. Research on hate and discrimination, Norwegian Institute for Social Research (2016) https://samfunnsforskning.brage.unit.no/samfunnsforskning-xmlui/bitstream/handle/11250/2442453/Report+2016_21. pdf?sequence=2&isAllowed=y
- M. F. Wright, L. B. Schiamberg (2021), "Child and Adolescent Online Risk Exposure. An Ecological Perspective", Elsevier (2021)
- A. John et al (2018), "Self-Harm, Suicidal Behaviours, and Cyberbullying in Children and Young People: Systematic

Review", doi:10.2196/jmir.9044
- R. Allen QC, D. Masters (2020), Regulating for an Equal AI: A new role for Equality Bodies. Meeting the new challenges to equality and non-discrimination from increased digitisation and the use of Artificial Intelligence, Equinet (2020) https://equineteurope.org/wp-content/uploads/2020/06/ai_report_digital.pdf
- S. Dimmock, My Pocket Guide to CRC Reporting, Child Rights Connect (2020) https://resourcecentre.savethechildren.net/node/17945/pdf/crcbookleteng.pdf
- Իմացի՛ր թվային միջավայրում քո իրավունքների մասին. Թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ https://rm.coe.int/coe-learnaboutrights-armenian-web/1680a22a80
- Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենք, 29.05.1996 թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149836
- Երեխայի իրավունքների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, 20.11.1989թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60503
- Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին ԵԽ կոնվենցիա: https://rm.coe.int/168046e1e4
- Ընդհանուր բնույթի մեկնաբանություն թիվ 25 (2021). Թվային միջավայրում երեխաների իրավունքների վերաբերյալ CRC/C/GC/25, Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե, 2021 թ. մարտի 2 https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fGC%2f25&Lang=en
- Ընդհանուր բնույթի մեկնաբանություն թիվ 3 (2003): ՄԻԱՎ/ՁԻԱՀ և երեխայի իրավունքները: Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե. CRC/GC/2003/3, 2003 թ. մարտի 17. https://tbinternet.ohchr.org/_layouts/15/ treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fGC%2f2003%2f3&Lang=en
- Ընդհանուր բնույթի մեկնաբանություն թիվ 12 (2009). Լսված լինելու երեխայի իրավունքը: CRC/C/GC/12, Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե, 2009 թ. հուլիսի 20 https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2FC%2FGC%2F12&Lang=en
- Ընդհանուր բնույթի մեկնաբանություն թիվ 14 (2013) իր լավագույն շահը որպես առաջնային հաշվի առնելու իրավունքի վերաբերյալ (3-րդ հոդվածի, 1-ին պարբ.) CRC/C/GC/14, Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե, 2013 թ. մայիսի 29. https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fGC%2f14&Lang=en
- ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի Երեխաների նկատմամբ բռնության հարցերով Հատուկ ներկայացուցչի տարեկան զեկույց, 2016թ., https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G16/000/90/PDF/G1600090.pdf?OpenElement
- Report of the United Nations High Commissioner for Human Rights on the expert workshops on the prohibition of incitement to national, racial or religious hatred. 2013 https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Opinion/SeminarRabat/Rabat_draft_outcome.pdf
- Մեկ - էջիկ "ատելության հրահրում" - Ռաբաթ թեստ https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/ Opinion/SeminarRabat/Rabat_threshold_test.pdf
- Ռաբաթի գործողությունների պլանը (Rabat Plan of Action) ազգային, ռասայական կամ կրոնական ատելության քարոզչությունն արգելելու մասին, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում. A/HRC/22/17/Add.4, (Հավելված). ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողով, 2013 թ. հունվարի 13 https://www.ohchr. org/sites/default/files/Rabat_draft_outcome.pdf
- Հանձնարարական CM/Rec(2012)2 անդամ երկրներին Նախարարների կոմիտեից երեխաների և մինչև 18 տարեկան երիտասարդների մասնակցության վերաբերյալ - CM/Rec(2012)2 http://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806a44f3
- Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) Ընդհանուր քաղաքականության թիվ 15 Հանձնարարական Ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-hate-speech-armenian-trans/1680a1dced
- Նախարարների կոմիտեի հանձնարարական անդամ- պետություններին, Ուղեցույց թվային միջավայրում երեխայի իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրացնելու համար - CM/Rec(2018)7 https://rm.coe.int/1680965673
- Guidelines to respect, protect and fulfil the rights of the child in the digital environment - Recommendation CM/Rec(2018)7 of the Committee of Ministers (2018) https://edoc.coe.int/en/children-and-the-internet/7921-guidelines-to-respect-protect-and-fulfil-the-rights-of-the-child-in-the-digital-environment-recommendation-cmrec20187-of-the-committee-of-ministers.html

Շնորհակալական խոսք

Ձեռնարկի հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում այն բոլոր մասնագետ-ներին և ուսուցիչներին, ովքեր խորհուրդներ են տվել ձեռնարկի բովանդակության վերաբերյալ, դիտարկել և կարծիք հայտնել Ձեռնարկի նախնական տարբերակների մասին:

Դասընթացի օրակարգի նմուշ

Ներկայացված օրակարգը միայն նմուշ է: Թեմաներին հատկացվող ժամանակը, դասավորությունը, թեմաների բաշխումը կարող է փոփոխվել ելնելով դասընթացավարի առաջնահերթություններից: Յուրաքանչյուր թեմայի համար հատկացվող ժամանակը մեծապես կախված է այն հանգամանքից, թե դասընթացավարը ինչ ծավալի նյութ է պատրաստվում փոխանցել մասնակիցներին, թե որքան խորքային է քննարկվելու թեման: Թեմային հատկացվող ժամանակը որոշելիս պետք է հաշվի առնել նաև մասնակիցների թիվը, խմբի բազմազանությունը. որքան մեծ լինի մասնակիցների թիվը և որքան բազմազան լինի խումբը, այնքան առավել հավանական է, որ երկար ժամանակ կպահանջվի քննարկումների, հարցերի և գործնական աշխատանքների համար:

Օր 1	
10:00 – 10:30	Ծանոթացում, ներածական մաս
	Խորհուրդ. Դասընթացը մեկնարկելիս միշտ ներկայացեք, պատմեք մի փոքր ձեր մասին և խնդրեք, որ մասնակիցները ևս ներկայանան: Այս գործընթացը կարող եք իրականացնել բազմաթիվ ինտերակտիվ միջոցներով: Լրացուցիչ խաղային հնարավորություններ կարող եք գտնել Կողմնացույց և Կողմնացույցիկ ձեռնարկներում:
10:30 – 10:45	Դասընթացի խնդիրների և նպատակների ներկայացում
	Խորհուրդ. Պատմեք, թե ինչի մասին է դասընթացը, ինչ մեթոդնե-րով եք այն վարելու:
10:45 – 11:00	Ընդմիջում
11:00 – 12:30	Երեխայի իրավունքների հիմունքները
	Խորհուրդ. Այս հատվածը կարող եք սկսել հակիրճ ներկայացնելով երեխաների իրավունքները և սկզբունքները: Այնուհետև կատարեք վարժություններ՝ ներկայացված այս ուղեցույցում, կամ հղումներում առկա այլ ուղեցույցներում: Վարժությունից հետո կարող եք առավել մանրամասն խոսել իրավունքների մասին: Հիշե՛ք, որ ոմանք սովորում են լսելով, ոմանք՝ տեսնելով, ոմանք էլ՝ անելով: Փորձեք ընդգրկել այս բոլոր մեթոդները:
12:30 – 13:30	Ճաշի ընդմիջում
13:30 – 15:00	Ինչ է ատելության խոսքը, ինչպե՞ս է այն դրսևորվում առցանց
15:00 – 15:30	Ընդմիջում
15:30 – 17:00	Ատելության խոսքը՝ շարունակություն: Գործնական աշխատանքի արդյունքների ներկայացում և քննարկում:
17:00 – 18:30	Բուլինգը, կիբերբուլինգը և դրանց դրսևորումները:

Օր 2	
10:00 -10:30	Վերհիշում
	Խորհուրդ. Ժամանակ հատկացրեք նախորդ օրվա դասընթացը վերհիշելու համար: Դա կարող եք անել շատ պարզ եղանակով՝ խնդրեք, որպեսզի յուրաքանչյուր մասնակից վերհիշի և պատմի որևէ տեղեկություն, որին տեղեկացել է նախորդ օրվա դասընթացին:
10:30 - 12:00	Համացանցային գրագիտություն
12:00-12:30	Ընդմիջում
12:30-13:30	Ատելության խոսքի դեմ պայքար՝ այլընտրանքային պատումների միջոցով:
13:30-14:30	Ճաշի ընդմիջում
14:30- 16:00	Ատելության խոսքի դեմ պայքար՝ այլընտրանքային պատումների միջոցով: Գործնական աշխատանքի արդյունքների ներկայացում և քննարկում:
16:00-16:30	Ընդմիջում
16:30-17:30	Դասընթացի ամփոփում
	Խորհուրդ. Այս հատվածում փորձեք վերհիշել այն ամենն, ինչ քննարկել եք դասընթացի ընթացքում: Կարող եք Power Point սալիկաշարի միջոցով ներկայացնել դասընթացի հիմնական դրույթները, հարցրեք մասնակիցներին, թե ինչն էր իրենց համար առավել տպավորիչ: Կարևոր է, որ մասնակիցներն ունենան «Ինչ անել» հարցի պատասխանը, սակայն նաև հասկանան, որ փոփոխությունները դժվարությամբ, սակայն հնարավոր է իրականացնել կայուն ջանքերի արդյունքում և չպետք է հիասթափվել այս ոլորտում անհաջողություններից:
17:30-18:00	Դասընթացի ամփոփում
	Խորհուրդ. Այս հատվածը դասընթացավարի կարողությունների և հմտությունների հետագա զարգացման համար է: Կարող եք հարցնել մասնակիցներին, թե ինչն իրենց առավել դուր եկավ դասընթացի ընթացքում և/կամ ինչը կցանկանային փոխել: Կարող եք նախապես պատրաստել դասընթացի գնահատման թերթիկ և խնդրել մասնակիցներին լրացնել այն: Ցանկալի է, որ ընձեռեք նրանց այն անանուն լրացնելու հնարավորությունը:

«Ատելության խոսքի դրսևորումները առցանց տիրույթում» կրթական ձեռնարկի նպատակն է զարգացնել ուսուցանողների և երեխաների գիտելիքներն ատելության խոսքի և բուլինգի, այդ համատեքստում՝ երեխայի իրավունքների վերաբերյալ, ուսուցանողների և երեխաների մոտ ձևավորել հակադրվող վերաբերմունք ատելության խոսքի և բուլինգի նկատմամբ, զարգացնել ուսուցանողների և երեխաների կարողությունները՝ բացահայտելու երեխայի իրավունքների խախտումները, մասնավորապես, բուլինգի, ատելության խոսքի առցանց դրսևորումների համատեքստում ու քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ, ինչպես նաև ուսուցանողներին տրամադրել գործիքակազմ՝ ատելության խոսքի և բուլինգի վտանգների մասին երեխաներին իրազեկելու նպատակով:

HYE

Եվրոպական միության անդամ պետությունները որոշում են կայացրել միավորել իրենց գիտելիքները, ռեսուրսները և ճակատագրերը: Անդամ պետությունները միասին կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման տարածաշրջան՝ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատի ազատությունները: Եվրոպական միությունը պատրաստակամ է կիսվել իր ձեռքբերումներով և արժեքներով իր սահմաններից դուրս գտնվող երկրների և ժողովուրդների հետ:

www.europa.eu

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

www.coe.int

Ֆինանսավորվում
է Եվրոպական միության
և Եվրոպայի խորհրդի կողմից

Եվրոպական միություն

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Իրականացվում
է Եվրոպայի խորհրդի կողմից